№ 38 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՓԵՏՐՎԱՐԻ

1911

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՓԵՏՐՎԱՐԻ № 38

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Մարտի 1-ից մինչեւ տարվայ վերջը 9 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։

Կովկասից դուրս գտնվող անձերը և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄՕՍԿՎԱՅԻ հայ ընտանիքներից երկուսում, փոքրահասակ մանուկների միջև մայրենի լեզուի հիմքը դնելու եւ առաջ տանելու համար՝ ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ օրիորդներ, որոնց, բացի ռոճկից, կը տրվի ամեն յարմարութիւն։

Օրիորդները պէտք է աւարտած լինեն միջնակարգ դպրոց։ Առաւելութիւն կը տրվի նրանց, որոնք, աւարտելուց յետոյ, պարապած կը լինեն հայերէնի դասերով։

Ցանկացողները կը հրաւիրվեն՝ իրանց մասին տեղեկութիւններ ստացվելուց յետոյ։

Դիմել՝ Москва, священнику Назарьянцъ.

„ԿՕՄԷՏԱ"
ԾԽԱԽՈՏԻ
ՎԱՐՉՈՒ
Առաջարկում

ФАБР МАРКА
1910
Т-ВА
„КОМЕТА"
ТИФЛИСЪ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԹԻՒՆԸ
հետեւեալ պապիրօսներ

«ԳԱԼԼԷԱ» 25 հ. 15 կոպ.
«ԱՐԻՍՏՕԿՐԱՏԻԿ» 25 հ. 30 կոպ.
«ԷԱԻԱ» 25 հ. 25 կ., 10 հ. 10 կոպ.
«ԻԴԷԱԼ» 25 հատը 15 կոպ.
«ՓՈՒՐՕՐ» 10 հատը 6 կոպ.
„ՐՕՍԿՕՇ" 25 հատը 10 կոպ., 15 հատը 6 կոպ.
„ԲԱՐԲԱ", „ՋՎՕՆ" եւ „ԷԽՕ" 20 հատը 5 կոպ.,

Խնդրում է յարգելի հասարակութեան առանձին ուշադրութիւն դարձնել իր արդիւնաբերութեան բարձր յատկութեան վրա, որին ամենալաւ եւ փաստացի ապացոյց ներկայանում է իր արդիւնաբերութեան պահանջի պրօգրեսիվ զարգացումը։ Մեծ քանակութեամբ պատուէրներ ստացած լինելու պատճառով, վարչութիւնը թախանձագին խնդրում է պարոնայք պատուիրողներին, յօգուտ իրանց շահերի, պատուէրներն ուղարկել վաղօրօք, որպ՚ սզի կարելի լինի իր ժամանակին գոհացումն տալ պատուիրողներին։ Միևնոյն ժամանակ վարչութիւնը ընդլայնում է ֆաբրիկան, որի համար արդէն ձեռնարկել է նոր շինութիւնների կառուցման և սպասում է ստացված նոր սիստեմի մեքենաները։ Կասկած չը կայ, որ այդօրինակ տեխնիկական կատարելագործութիւն մտցնելով՝ կէժանանայ արդիւնաբերական աշխատանքը, որը և կարելիութիւն կը տայ ֆաբրիկայի արդիւնաբերութեան բարձր յատկութիւնը ապագայում ևս անխախտ պահելու։

«ԿՕՄԷՏԱ» ընկերութիւն

182. 1—1

ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Երէկ, փետրվարի 23-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ Անդրկովկասի մանր վարկի գործիչների համագումարը, որին մասնակցելու են եկել Կովկասի զանազան վայրերից բաւականաչափ ներկայացուցիչներ։

Ողջունում ենք ի դէմս այդ համագումարի մի գործ, մի կօօպերատիվական ձեռնարկութիւն, որ 3—4 տարի է միայն, ինչ գոյութիւն ունի մեր երկրում և որի զարգացումը, բարգաւաճումը, լայն ծաւալ ստանալը այնքան կարևոր է Անդրկովկասի գիւղատնտեսութեան, մանր արդիւնաբերութեան և տնայնագործութեան համար։

Խոշոր արդիւնաբերութեան, խոշոր առևտրական ձեռարկութիւնների համար մենք ունենք բանկեր, կրէդիտային զանազան հաստատութիւններ, բայց մանր արդիւնաբերութեան, գիւղատնտեսական կարիքների համար այդ խոշոր հաստատութիւնները անօգուտ են հանդիսանում։ Յաճախ իր ժամանակին դրված մի թեթև օգնութիւն, մի փոքր աջակցութիւն գիւղացուն, երբ, օրինակ, ընկնում է նրա կովը կամ ձին կամ եզը, կարող է փրկել քայքայումից մի ամբողջ ընտանիքի տնտեսութիւնը։

Բանկերը, կրէդիտային խոշոր հաստատութիւնները, գտնվելով կենտրոնական և մեծ քաղաքներում, անմատչելի են գաւառական ժողովրդին և մանաւանդ գիւղացիութեանը։ Եւ ահա մանր վարկի ընկերութիւնները, խնայողական կասսաները, հիմնված կօօպերացիայի վրա, հաստատվելով գաւառներում և գիւղերում կարող են օգնել գիւղական համայնքներին, բանալով նրանց համար կրէդիտ և փոխ տալով անհրաժեշտ գումարը։

Չը նայելով որ 3—4 տարի է, ինչ մանր վարկի ընկերութիւնները սկսել են բացվել մեր երկրում, բայց նրանք արդէն այնքան տարածվել են և այնքան օգտակար դարձել գաւառների համար, որ այսօր հնարաւոր է լինում մանր վարկի գործիչների ժողով գումարել։

Այդ համագումարը, իբրև առաջինը Անդրկովկասում, պէտք է միջոցներ ցոյց տայ և մշակէ մանր վարկի լայն զարգացման համար Անդրկովկասում և դնէ նրա մատակարարութեան գործը այնպիսի պայմանների մէջ, որ մեր երկրի գիւղական ժողովուրդը կարողանայ շահաւէտ և արդիւնաւոր կերպով օգտվել մանր վարկից։

Այդ տեսակէտով ողջունում ենք համագումարի բացումը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 փետրվարի

Պետերբուրգ. — Կառավարիչ սենատի գոյութեան երկհարիւրամեակի առիթով Պետրոս-Պօղոս տաճարում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ սենատի հիմնադիր Կայսր Պետրոս Մեծի գերեզմանի վրա։ Ներկայ էր սենատը լիակատար կազմով։ Սենատի հանդիսաւոր նիստը կը կայանայ մարտի 2-ին։

Պետական Խորհրդի մասնաժողովը արևմտեան նահանգներում զեմստվօ մտցնելու օրինագծի առիթով ընդունեց Օլիգարի ուղղումը այն մասին, որ դէն ձգվի այն յօդուածը, որ որոշում է մի կանոն, որի համաձայն դպրոցական խորհուրդներում նախագահել կարող են միայն ռուս ծագում ունեցող մարդիկ, և մերժեց Օֆրօսիմօվի ուղղումը, որ որոշում է ստացուածքային ցէնզի չափը ձայնաւորների համար, և Ստիշինսկիի ուղղումը, որ առաջարկում է նոր ձևով ցուցակագրել հողերի քանակութիւնը, որ իրաւունք է տալիս մասնակցել ընտրողական ժողովներին։

—

Պետերբուրգ.—Առևտրի մինիստրութիւնը մինիստրների խորհրդին ներկայացրեց մի առաջադրութիւն՝ հաստատելու դօնեան պօլիտեխնիկումին կից գիւղատնտեսական բաժանմունք և նաւթային գործի ամբիօն։

—

Պարիզ.—Հավասը հերքում է «Լօկալ Անցէյգէրի» այն տեղեկութիւնը, թէ իբր Պիշօնը նշանակվում է դեսպան Պետերբուրգում։

Մինիստրական դեկլարացիան գեղեցիկ տպաւորութիւն թողեց պալատում։ Մօնիսը դեկլարացիան կարդաց հասարակ կերպով, առանց էֆէկտների և համոզեց անկեղծութեամբ։ Փոքրամասնութիւնը, որ թշնամի է կաբինէտին, կազմվեց ակսիօն-լիբէրալ, աջակողմեան, մասամբ առաջադէմ անդամներից։ Միացեալ սօցիալիստները, 20 առաջադիմականներ, 30 ձախակողմեան դեմօկրատներ, 30 արմատականներ և արմատական-սօցիալիստներ, ընդամենը մօտ 170 մարդ, ձեռնպահ մնացին քուէարկութիւնից։

Կաբինէտի դեկլարացիան մամուլն ընդունեց սառը. բոլոր կուսակցութիւնները համարում են անորոշ։

Երէկվայ մինիստրական մեծամասնութիւնը բաղկացած էր պալատում 1 առաջադիմականից, 30 անկախ սօցիալիստներից, 44 ձախակողմեան դեմօկրատներից, 93 ձախակողմեան արմատականներից, 141 սօցիալիստ-արմատականներից։ Փոքրամասնութիւնը՝ 18 աջակողմեաններից, 26 ակսիօն-լիբէրալներից, 10 անկախներից, 57 առաջադիմականներից, 1 ձախակողմեան դեմօկրատից, 1 սօցիալիստ-արմատականից, 1 անկախ-սօցիալիստից։ Ձեռնպահ մնացին 2 ակսիօն-լիբէրալ, 5 անկախ, 15 առաջադիմական, 21 ձախակողմեան դեմօկրատ, 70 միացեալ սօցիալիստ։

Պատգամաւորների պալատը ընդունեց մի օրինագիծ, որ լիազօրութիւն է տալիս կառավարութեանը կառուցանել երկու գրահանաւ, որոշելով կառուցման ժամանակը երեք տարի և հանելով մասնաւոր ֆիրմային պատուիրելու պարտաւորութիւնը։

Պալատի երեկոյեան նիստում Դէլկասէն յայտնեց, որ ամեն ջանք կը գործադրէ իրականացնելու համար այն բարենորոգումները, որ պահանջում է անկէտային մասնաժողովը, այսինքն՝ բարելաւել զինապահեստները և ոչնչացնել աւելորդ պաշտօնները։

—

Կ. Պոլիս.—Պալատում օպպօզիցիայի պատգամաւոր Իզմայիլ-Քէմալը իր ճառում թոյլ տուեց մեծ վէզիրի հասցէին վիրաւորական ինսինուացիաներ Բաղդադի երկաթուղու հարցի առիթով։ Սերէսի պատգամաւոր Դէրվիշ-բէյը հարուածեց նրա երեսին։ Բարձրացաւ սկանդալ։ Նախագահը ցաւակցութիւն յայտնեց միջադէպի համար, որ գցում է պալատի արժանապատուութիւնը։

Պատգամաւորների պալատը ընդունեց թիւրք-բուլղարական մաքսային ժամանակաւոր համաձայնութիւնը 9 ամսով։

—

Տանժէր.—Ֆէցի շուրջը ժողովված ցեղերը ապստամբվեցին և թոյլ չեն տալիս դուրս գալ քաղաքից և ներս մտնել։ Սուլթանը ուղարկեց մի քանի զօրախմբեր։ Երկու զօրամասերը ջարդվեցին և կորցրին շատ սպանվածների և վիրաւորների։ Կորուստներ ունեցաւ նաև հեծելազօրը։

—

Սօֆիա.—Պաշտօնական «Պրեպօրեցը» անգլիական պալատում Բէկստօնի արած հարցապնդման առիթով մակեդօնական հրոսակախմբերի վերաբերութեամբ բողոքում է այն խօսքերի դէմ, երբ Բօլգարիան հրոսակախմբեր էր ուղարկում Մակեդօնիա։ Լրագրի ասելով՝ թիւրքական յեղափոխութիւնից յետոյ Բօլգարիայի հայդուկները վերադարձան իրանց գիւղերը և եղբայրացան թիւրքերի հետ, յետոյ հայդուկները նորից երևացին, երբ գաւառական իշխանութիւնները սկսեցին անասելի խստութիւններով հալածել նախկին յեղափոխականներին, որոնք արդէն խաղաղ գիւղացիներ էին դարձել։ Բերելով Կրիւի, Լէնստօունի յայտարարութիւնները և «Թայմսի» յօդուածները, որոնցով նախազգուշացվում է Աբդիւլ Համիդի րեժիմի նորոգվելու վտանգաւոր հետևանքների մասին, «Պրեպօրեցը» յայտնում է, որ Բօլգարիայի դիրքը 1908 թւից յետոյ ամեն կասկածանքներից դուրս է։

—

Տօկիօ.—Եօկօհամայի նաւաշինարաններում բանւորների գործադուլը դադարեց ոստիկանական ոյժով։

Ընդմիշտ Եապօնիայից հեռացաւ յայտնի եապօնագէտ պրօֆեսոր Չէմբէրլէնը, որ այստեղ ապրեց 40 տարի։

—

Լիսաբօն.—Կառավարութիւնը պատուիրագրեց յայտնել ոստիկանութեանը Բրազիլիայից և Հիւսիսային Եւրօպայից եկողների անունները, որովհետև ստացել են մանրամասն տեղեկութիւններ Րիօ-դէ-Ժանէյրօյում կազմված դաւադրութեան մասին։ Նրա ճիւղերը երևան են հանվել Լիսաբօնում և Օպօրտօյում։ Նահանգապետը խնդրում է կառավարութեանը աքսորել տեղական եպիսկոպոսին, որ դրդում է քահանաներին՝ չը հնազանդվել իշխանութեանը և գրգռել ժողովրդին։

—

Բերլին.—Լանդտագ։ Բէտման-Հօլվէգը ժող. լուսաւորութեան մինիստրութեան նախահաշւի քննութեան ժամանակ շօշափեց Պրուսիայի վերաբերմունքը դէպի պապական կուրիան, շաղկապելով հակամօդերնիստականութեան երդման հարցի հետ, պնդեց, որ Գերմանիայում, մասնաւորապէս Պրուսիայում, այդ առիթով զգացվում է չափազանց մեծ դժգոհութիւն, յայտնեց, որ չի թոյլ տայ խախտելու դաւանաբանական խաղաղութիւնը։ Խօսելով Վատիկանին կից պաշտօնավարող գերմանական միսսիան վերացնելու հարցի մասին, Բէտման-Հօլվէգը դէմ խօսեց։ Վերջում մինիստրը խնդրում է կուսակցութիւններին՝ ամեն կերպ պահպանել խաղաղութիւնը ըստ հնարաւորութեան, առանց պետութեան արժանապատուութիւնը և շահերը խախտելու։ (Բուռն ծափահարութիւն)։

—

Վիչէնցա.—Վախճանվեց վիպասան Անտօնիօ Ֆօգացցարօն։

—

Պէկին.—Վերջին վիճակագրութեան համաձայն՝ Պէկինի ազգաբնակութիւնը 508,019 տղամարդ և 256,638 կանայք են։

—

(Լրագիրներից)

Պարիզ.—Ֆալիէրը յայտնեց Մօնիսին, որ նոր կաբինետը ընդհանրապէս պիտի հետևէ Բրիանի ծրագրին, միայն տալով նրան աւելի արմատական գունաւորութիւն նրա համար, որպէս զի վերականգնէ հանրապետական կուսակցութեան միութիւնը։

Մօնիսը համաձայնեց դրա հետ, նկատելով որ միացումը կարելի է՝ եթէ օպպօզիցիայի մէջ ներկայումս գտնվող խմբակները մտնեն կաբինետի մէջ։

Ֆալիէրը համաձայնութիւն յայտնեց, որից յետոյ պորտֆէլներ առաջարկվեցին Դէլկասէին և Բէրտօժին։ Մօնիսն առաջարկեց Պուանկարէին արտաքին գործերի մինիստրի պաշտօնը, Դէլկասէին՝ ծովային մինիստրի, Բէրտօյին՝ զինուորական մինիստրի։

«Figaro»-ն եռանդով յարձակվում է Դէլկասէի վրա, համարելով սխալ՝ նրան կաբինետի մէջ ընդունելը։

Ընդհակառակն, «Echo de Paris»-ն յայտնում է, որ Վիէննայի լրագիրների կողմից մեծ յանդգնութիւն է հարց բարձրացնել Դէլկասէի նոր պաշտօնի տեղի կամ անտեղի լինելու մասին։

Պարիզեան և լօնդօնեան մամուլի մէջ իր վրա դարձրեց ընթերցողի ուշադրութիւնը «Journal»-ում տպված արտաքին գործերի նախկին մինիստր Հանօտօյի յօդուածը, որ վայելում է երրորդ հանրապետութեան պատմութիւնը գրողի համբաւ։ Հանօտօն, մատնանշելով Եւրօպայում պօտսդամեան բանակցութիւններից յետոյ կատարված փոփոխութեան վրա, ասում է, որ ֆրանսիական կառավարութիւնը պէտք է այժմ պարզէ, թէ գոյութիւն ունի՞, արդեօք, եռապետեան համաձայնութիւն կամ ոչ. իսկ եթէ նա գոյութիւն ունի, ինչ է նա իսկապէս ասած. ներկայանու՞մ է կեղծ գրաւոր պայմանագիր կամ երեք պետութիւնների բարեկամութիւն, որոնք միշտ և ամենուրեք ազատ գործելակերպեր ունեն։ Վերջին դէպքում, Հանօտօյի կարծիքով, ոչ մի համաձայնութիւն չը կայ։ Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան նախկին ղեկավարը պահանջում է մի բան՝ պարզութիւն։

Առանձնապէս Հանօտօյի յօդուածի մասին կանգ է առնում մեկնութիւններով Լօնդօնի արմատական մամուլը, գլուխ ունենալով «Daily News»-ին։

—

Բերլինում պաշտօնապէս յայտնվեց, որ Հռօմ, Իտալիայի միացման 50-ամեակը շնորհաւորելու համար, ուղարկվելու է կրօնպրինցը։ Հռօմում կարծում էին, որ յօբելեանական հանդէսներին կը գնայ ինքը կայսրը։ Կայսրի հրաժարվելը Իտալիայում բացատրում են նրանով, որ Վիլհէլմը չէ կամեցել գրգռել Վատիկանին։ Ինչպէս յայտնի է, «Թագաւորական շղթայակիրը» մտքով էլ չէ անցնում, որ Հռօմ ուղարկած Թագաւորին այցելեն այնպիսի միապետներ, որոնք ի թիւս իրանց հպատակների ունեն նաև կաթօլիկներ։

Այն հանգամանքը, որ Հռօմի հանդէսներին բացակայելու են երկու դաշնակից միապետներ, մեծ դժգոհութիւն է յարուցանում Հռօմի մամուլի մէջ։ Որ կաթօլիկ եկեղեցու հաւատարիմ զաւակ Ֆրանց-Յօսէֆ կայսրը չէր գնալու Հռօմ, յայտնի էր առաջուց։ Դեռ 20 տարի առաջ, եռապետեան դաշնակցութեան արշալոյսին, երբ Աւստրիայի և Իտալիայի կառավարութիւնները որոշեցին կայացնել միապետների տեսակցութիւն, այդ նպատակով ընտրվեց Վենետիկը։ Բայց որ Վիլհէլմ կայսրը, իբրև բողոքական, հնազանդվում է Վատիկանին, դա թւում է տարօրինակ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 փետրվարի

Թէհրան.—Սիփէհդարը ընդունում է զինուորական մինիստրի պորտֆէլը, մէջլիսի նախկին նախագահ Մուստաշար-ուդ-Դօվլէն դառնում է ներքին գործերի մինիստր, այժմեան նախագահ Մումթազ-ուդ-Դօվլէն ֆինանսների մինիստր, Մուխտաշիմ-ուս-Սալթանէն՝ արտաքին գործերի մինիստր։

—

Թաւրիզ.—Եկաւ անգլիական մի խոշոր ֆիրմայի ներկայացուցիչ՝ գորգեր գնելու համար։ Տեղական վաճառականները փորձեցին բօյկօտի ենթարկել ֆիրմային, համաձայն Կ. Պոլսից ստացված ցուցմունքների, բայց անաջող։

—

(Լրագիրներից)

Թէհրան.—Սարդար Ասադը մէջլիսի և պետական խնամակալի առաջ պարտաւորվեց քաղաքն ազատել տէրրօրիստներից։ Նա մտադիր է կալանաւորել նրանց, զինաթափ անել և աքսորել Պարսկաստանի սահմաններից։

—

Թէհրան. — Սպանված ֆինանսների մինիստր Սանի-ուդ-Դօվլէի տոհմի բոլոր պետական պաշտօնեաները հրաժարական տուին։

Զինուորական մինիստրը առաջարկութիւն արաւ մէջլիսին ընտրել 10,000 մարդու թափառական ցեղերից՝ հեծելազօր կազմելու համար։ Նախագիծն ընդունվեց և մէջլիսը ձեռնարկել է նրա յօդուածային ընթերցման։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 փետրվարի

Պետերբուրգ.—Պրոֆէսօրների միջնորդութեամբ ոստիկանախմբերը հեռացան կանանց բարձր դասընթացքների շինութիւններից։ Ունկնդրուհիների բացակայութեան պատճառով դասախօսութիւններ չը կան։

Կանանց բժշկական դասընթացքներում դասախօսութիւններ նոյնպէս չը կան։ Պրոֆէսօրների խորհուրդը յայտարարեց, որ ուսումը աւարտած չի համարվի, եթէ մինչև փետրվարի 25-ը դասախօսութիւնները չը վերսկսվեն։

Համալսարանը պաշտպանվում է ոստիկանութեամբ։ 150 նշանակված դասախօսութիւններից կայացան 56-ը՝ ունկնդիրների սակաւ թւի ներկայութեամբ և լիակատար կարգ ու կանոնով։

—

Տօմսկ.—Տեխնօլօգիական ինստիտուտում նետված սրուակներից հրդեհ ծագեց մի քանի տեղերում։ Կրակը ամենուրեք հանգցրին բացի մի տեղից, ուր փայտէ շինութեան պատճառով բոցերը բարձրացան մինչև տանիքը։ Միաժամանակ հրդեհի հետ ինստիտուտում կատարվեց քիմիական օբստրուկցիա. նետեցին մի հեղուկ, որ անմիջապէս բռնկվեց։ Կրակը շուտով հանգցրին։ Դասախօսութիւնները չընդհատվեցին։ Կատարվում է քննութիւն։

—

Խարկով.— Համալսարանի վարչութիւնը որոշեց թոշակ տալ միայն այն ուսանողներին, ո՛րոնք կը ներկայացնեն վկայականներ պարապմունքներին մասնակցելու մասին։

ԺԱՆՏԱԽՏ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 փետրվարի

Խարբին.—Մնում են 306 հիւանդներ։

—

Պետերբուրգ.—Աստրախանի նահանգապետը հեռագրում է, որ Կիրգիզի անապատում Ջավթիր կոչված տեղում այլես ժանտախտ չը կայ։

Վաղը Պետերբուրգում կը բացվի հակաժանտախտային համագումարը։

—

(Լրագիրներից)

Ժանտախտից վախճանված զինւորա-բժշկական ճեմարանի 5-րդ դասընթացքի ուսանող Ի. Մամանտօվը հօֆմէյստէր Մամանտօվի որդին է։ Հօֆմէյստէր Մամանտօվը օգնականն է այն գլխաւոր կառավարչի, որը ընդունում է խնդիրներ Բարձրագոյն անուամբ։

Հանգուցեալը աւարտելով պաժերի կորպուսը՝ մտաւ զինւորա-բժշկական ճեմարանը։

Հէնց որ ստացվեց ժանտախտի մասին առաջին համբաւը Հեռաւոր Արևելքից, հանգուցեալ Մամանտօվը միջնորդել սկսեց, որպէսզի ուղարկվի Հեռաւոր Արևելք։ Մեկնելով Խարբին, նա մերժեց ընդունել որևէ վարձատրութիւն։ Տեղ հասնելով, հանգուցեալը ամբողջովին նուիրվեց աշխատանքին։

Ժանտախտով հիւանդացած Սնիժկօվային խնամելու ժամանակ ինքն էլ վարակվեց։ Արևելեան-չինական երկաթուղու գլխաւոր վարչութեան մէջ ստացված հեռագրական տեղեկութիւնը հաղորդում է այն մեծ հետաքրքրութեան մասին, որպիսին ցոյց տուեց Մամանտօվը, ուշադիր կերպով հետևելով հիւանդութեան աստիճանական զարգացմանը, հէնց իր վրա։

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐՋԻՆ ԴԵՊՔԵՐԻՑ

Թաւրիզ, 14 փետրվարի

Չարաբաստիկ Ղարաբաղը խաղաղ օր տեսնելիք չունի։ Ոչ խեղճ հայերը հանգիստ ունեն գայլ խաների ձեռքից, և ոչ էլ արիւնկզակ գազանները ձեռք են քաշում թշուառ հայ գիւղացիներից։

Ղուլուզ հայաբնակ գիւղի գիւղատէրերը՝ Իսկէնդէր, Հիդայէթ և Րահիմ խաները սարսափեցրին ողջ գիւղը այն աստիճան, որ բնակիչները երկիւղից փախան ու ապաստանեցին Խանագեան։ Յունվ. 27-ին, երեկոյեան, Հիդայէթ խանը 15 զինված մարդկանցով մտնում է գիւղը և բռնի պահանջում այն երեք երիտասարդներին, որոնք՝ ուրիշ ցեղերի ներկայացուցիչների հետ ներկայացել են Ահարի դատաւորին ու յայտնել իրանց կարիքների մասին, նախօրօք նոյն դատաւորի կողմից տրված հրամանի համաձայն։ Գիւղի աղսախկալները պատասխանում են, որ դրանք գիւղումը չեն։ Խանը հրամայում է բերել այն մարդկանց, որ մի քանի ամիս առաջ սպանել էին մի մարդու։ Սպանվածի այրին ասում է, որ սպանողները ոչ թէ հայեր էին, այլ թուրքեր, մինչև անգամ յիշում է անունները։ Խանը պահանջում է աղսախկալներից և կնոջից իրանց հետ գնալ և երես առ երես հաստատել այդ։ Գիւղից մի քիչ հեռանալով յետ են դարձնում կնոջը և իրանց հետ տանում ծերերին ու գիւղի քահանային։

Այդ տեղում գիւղացիք հանդիպում են Րահիմ խանին, որը 32 ձիաւորներով գալիս էր գիւղ։ Քահանայի հետ գիւղացոց տանում են Իսկէնդար խանի մօտ. 3 օր գիւղացիներին չարաչար տանջելուց, քահանային անպատկառօրէն պար ածելուց և փարաջան պատառ-պատառ անելուց յետոյ 450 թումանի տուգանք և 75 թուման ծառաների համար ստանալով բաց են թողնում, բռնի առնելով միաժամանակ նրանցից շնորհակալութեան և այսուհետև հաւատարիմ ծառայելու համար թուղթ։

Հէնց որ գիւղացիք լսում են յիշեալ դէպքը, թողնում են տուն, տեղ, տաւար և սարսափահար փախչում Խանագեան գիւղը։ Սառնամանիքներից ճանապարհին մեռնում են 3 երեխայ և կորչում 45 գլուխ տաւար։

Դղմարի Ղուլուզ գիւղացիք բողոքագիր են ներկայացրել վերոյիշեալ հարստահարութիւնների համար Թեմական պատգամաւորական ժողովին։ Ժողովը փետրվարի 8-ին կայացած նիստում հերթական դարձրեց բողոքը և վճռեց, որ Թեմական սրբազանը դիմէ նահանգապետին և դարման պահանջէ։ Բացի դրանից ցանկացողներ էլ եղան Ղարաբաղի հայ ազգաբնակութեան վիճակը գրել Թէհրան մէջլիսին և հայ պատգամաւորին։ Ղարաբաղի հայ գիւղացիների դրութիւնը արժանի է լուրջ ուշադրութեան և անտարակոյս պարսից պարլամենտի հայ անդամը խիստ հարցապնդումներով մէջլիսի ուշադրութիւնը կը հրաւիրէ տարաբաղդ ղարաբաղցիների կացութեան վրա։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆՐ ՎԱՐԿԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Երէկ, փետրվարի 23-ին, ցերեկվայ ժամը 2-ին, Վրաց ազնուականութեան թատրոնում տեղի ունեցաւ Անդրկովկասի մանր վարկի գործիչների համագումարի պաշտօնական բացումը, մասնակցութեամբ պաշտօնական անձանց, զանազան տեղերից եկած պատգամաւորների, հասարակական հիմնարկութիւնների և մամուլի ներկայացուցիչների։

Ժողովը բացեց Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին մի ճառով, որի մէջ արժանաւոր յարգանքն ընծայեց Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի ջանքերին՝ զարգացնելու մանր վարկը Անդրկովկասում և բացատրեց համագումարի կատարելիք գործի կարևորութիւնը։ Ապա խօսեց Ֆինանսների մինիստրութեան ներկայացուցիչ Զուրկօվսկին, ողջունելով եկած պատգամաւորներին և ներկայացուցիչներին և ցանկանալով արդիւնաւէտ աշխատութիւն։ Հուսկ յետոյ պետական բանկի կառավարիչ պ. Բէզօբրազօվը, յայտնելով որ ինքը կարգված է նախագահ համագումարի, մի երկար ճառով բացատրեց մանր վարկի ընկերութիւնների օգտակարութիւնը երկրի գիւղատնտեսական և մանր արդիւնաբերական գործի զարգացման համար և առաջարկեց ընտրել 4 փոխ-նախագահներ։

Ժողովը, կատարելով փոխ-նախագահների ընտրութիւնը, որոշեց օրական երկու անգամ գումարվել, առաւօտեան ժամը 10-ից մինչև 3-ը։ Ապա նիստը փակվեց երեկոյեան գումարվելու որոշմամբ։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Իրաւաբանական ակնարկներ կաթողիկոսական ընտրութեան առիթով *)

2) Ըստ Պօլօժէնիայի նոյնպէս ոչ մի հոգևորական կարգ ունենալ հարկաւոր չէ կաթողիկոս ընտրվելու համար։ Պօլօժէնիայի ոչ մի յօդուածում ոչ մի բառ չը կայ պահանջող, որ ընտրելին հոգևորական աստիճան ունենայ. Նրա 1111-րդ յօդուածը վերաստատում է, որ հայ եկեղեցին կառավարվում է իր կանոններով, աւանդութիւններով և ծէսերով, ուրեմն վաւերացնում է, ըստ հայ եկեղեցու, առանց ոչ մի հոգևորական կարգի ընտրելիութեան իրաւունքը։

Յիշենք այն յօդուածները, որոնք վերաբերում են ընտրութեան, որովհետև յատուկ յօդուած ընտրելիութեան որոշող՝ բնաւ չը կայ։

1123-րդ յօդուածը էլի կրկնում է, որ «բուն ընտրութիւնը կատարվում է Էջմիածնի տաճարում հայ եկեղեցու այս մասին գրած ծէսերի ճիշդ կատարմամբ»։ Սրանում էլ ոչ մի խօսք՝ ընտրելիի աստիճանի մասին։ 1124-րդ յօդուածում ոչ մի ակնարկ այս մասին։ Պօլօժէնիան գործածում է «աւագ թեկնածու» դարձուածքը այն անձերի համար, որոնք մտնում են քառանուն ընտրելեաց ցանկը։ Դեռ ընտրութիւնը չը կատարված՝ ոչ մի որոշիչ ածական չէ գործածում Պօլօժէնիան, և այս, իմ կարծիքով, գիտակցաբար։ Պօլօժէնիայի խմբագիր Շահան Ջրպետը, չը նայելով շատերի գանգատներին, շատ լաւ ըմբռնել էր հայ եկեղեցու ոգին և հնարաւոր եղած չափով պահպանում էր նրա հիմնական սկզբունքները. առանց հոգևոր կարգի կաթողիկոսական ընտրելի լինելու իրաւունքը հայ եկեղեցու իւրաքանչիւր զաւակի անկապտելի իրաւունքն էր, և Պօլօժէնիան չը խլեց, չոչնչացրեց այդ իրաւունքը։ «Զօրս աւելի ձայն ստացողները համարվում են աւագ թեկնածուներ»։ «Ձայների հաւասարութեան դէպքում վիճակը որոշում է աւագագոյնին»։ Շատ պարզ է ուրեմն, որ «աւագ թեկնածու» որոշիչը տրվում է քառանուն ցանկի մէջ մտնողներին։ Մինչև ընտրող ձայների նրանց անուան շուրջը միանալը, նրանց ինչ լինելը, հոգևորական թէ աշխարհական, Պօլօժէնիան ոչինչ չէ ասում և ոչ պահանջում։

Ուրեմն, ըստ Պօլօժէնիայի նոյնպէս, հայ եկեղեցու իւրաքանչիւր զաւակ ընտրելի է կաթողիկոսական պաշտօնի և աստիճանի։

3) Ըստ փոխարքայական կանոնների՝ հարցը հիմնովին փոխվում է։ Այդ կանոնները ներմուծել են մի նոր որոշիչ ընտրելիութեան համար, եկեղեցական կամ հոգևոր կարգաւոր (духовный сановникъ), օրինակ յօդուած 17-րդ և 21-րդ։

Փոխարքայի արած այս նորամուծութիւնը, ինչպէս երևում է, մեր բարձրաստիճան հոգևորականութեանը շատ հաճելի է թւացել, որ նրանք այդ պարզ կարգաւոր բառից շինել են բարձրաստիճան հոգեւորական դարձուածքը։ Վկայ՝ Բաբգէն վարդապետի «Կաթողիկոսական ընտրութիւն և կանոններ» տետրակը։

«Духовный сановникъ» նշանակում է հոգևորական կարգաւոր. духовный— հոգևորական, сановникъ — կարգաւոր. «санъ» այստեղ նշանակում է պարզապէս կարգ, ձեռնադրութեան կարգ։ Հայերէն՝ քահանաներին, վարդապետներին, եպիսկոպոսներին անուանում են կարգաւորներ... այսինքն այնպիսի անձինք, որոնք ունեն եկեղեցական բոլոր խորհուրդները, բոլոր սրբագործութիւնները կատարելու իրաւունքը։ Եկեղեցական ձեռնադրութեան կարգը եօթն է, և եօթներորդը՝ բարձրագոյնը՝ քահանայութիւնն է։ Վարդապետները ուրիշ ոչինչ չեն եթէ ոչ կուսակրօն քահանաներ։ Եպիսկոպոսութիւնը և կաթողիկոսութիւնը վարչական բարձր պաշտօններ են եկեղեցու հօտը հովւելու համար։ Մինչև աւագ սարկաւագութիւնը՝ եկեղեցու սպասաւորներ են. քահանան ձեռնադրութեան խորհրդի վերջին և կատարելատիպ արդիւնքն է, ուրեմն կատարեալ հոգևոր կարգաւոր է, այսինքն духовный сановникъ. Սինօդի ծանուցողական հրովարտակումն էլ այս մտքով հասկանալով «духовный сановникъ» դարձուածքի միտքը՝ գրված է «առ ի ընտրել ի համայն հոգևորականաց ազգիս զարժանաւոր յաջորդ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի». մի ուրիշ տեղ էլ էլի ասված է՝ «զո ոք յեկեղեցականաց գտանէք արժանաւոր այնմիկ վեհաստիճան հայրապետական իշխանութեան»։ Մեր եկեղեցական կանոնագրքում պատահում ենք, որ եպիսկոպոսի էլ անուանում են քահանայ, օրինակ Սահակ Բ.-ի առաջին կանոնը։ Ինչպէս էլ աստուածաբանական, կրօնական տեսակէտից բոլոր խորհուրդները, բոլոր սրբագործութիւնները կատարելու տեսակէտից՝ քահանայի և եպիսկոպոսի միջև ոչ մի տարբերութիւն չը կայ, և քահանան էլ նոյնպէս հոգևոր կարգաւոր է, «духовный сановникъ», ինչպէս եպիսկոպոսը։

Ուրեմն ըստ Փոխարքայի կանոնների՝ կաթողիկոսական ընտրելի են բոլոր հոգևոր կարգաւորները, այսինքն քահանաները, վարդապետները և եպիսկոպոսները։ Ինչպէս տեսանք, «բարձրաստիճան հոգևորական» դարձուածքը կամ սխալ թարգմանութիւն է «духовный сановникъ»-ի և կամ նպատակաւոր չարամիտ և խաւարամիտ մեկնութիւն։

Ամփոփենք մեր համառօտ քննութիւնը. ըստ հայ եկեղեցու և ըստ ռուսաց օրինաց, Պօլօժէնիայի, ամեն հայ ընտրելի է. ըստ փոխարքայական կանոնների բոլոր հայ եկեղեցու հոգևորականները, այսինքն քահանաները, վարդապետները և եպիսկոպոսները։ Առաջին երկու աղբիւրները աւելի կարևոր և ծանրակշիռ են, որոնց վրա կարելի է յենվել. բայց եթէ փոխարքայական կանոններով էլ առաջնորդվեն ընտրողները՝ ուղիղ հասկանալով նրանց միտքն ու նշանակութիւնը, այս անգամ մեր կաթողիկոսական ընտրելիների ցանկը հարիւրապատիկ անգամ աւելի լայն և նպատակայարմար պիտի լինի։

Մեր կարծիքով՝ ոչ մի օրինական արգելք չը կայ քահանաներից և վարդապետներից թեկնածուներ ցոյց տալու և ընտրելու։

Այժմ՝ որ եպիսկոպոսների մէջ իր ճնշող հեղինակութեամբ ոչ ոք չունեն աչքի առաջ ընտրողները, մեծ առաւելութիւն է արժանաւորագոյնը փնտռել վարդապետներ և քահանաների մէջ, լաւ համոզված լինելով՝ որ օրինական ոչ մի արգելք չը կայ այս մասին և «բարձրաստիճան հոգևորական» դարձուածքը, որով ընտրողների աչքերը և միտքը ահաբեկել և հմայել էին, իբրպէս գոյութիւն չունեցող խաբուսիկ բառեր էին։

Զարմանալի և մի քիչ էլ ամօթ է, որ պետական օրէնքով մեզ չարգելվածը մենք մեզ արգելենք, երբ այս արգելքը հակառակ է, հիմնովին հակառակ է մեր եկեղեցու կանոններին, աւանդութիւններին և ոգուն։ Սթափվենք։ Ընդարձակենք մեր կաթողիկոսական ընտրելիների ցանկը արժանաւոր վարդապետներով և քահանաներով։

Ո՛ւմ սրտին և հոգուն մօտ է այս հարցը, խնդրում ենք իր կարծիքը յայտնել այն մասին, թէ ո՛վ կարող է լինել ընտրելի. և եթէ համաձայն է մեզ հետ, յայտնէ իր թեկնածու քահանայի և վարդապետի անունը, վստահ լինելով՝ որ հարկ չը կայ Սիս ուղարկելու և եպիսկոպոս ձեռնադրել տալու, ինչպէս գրում էր վերջերս դր. Բազիլը։

Հարցը լուրջ է. մենք գցեցինք առաջին քարը, տուինք հետազօտութեան ծրագիրը։ Օն, առաջ, քննեցէք, լուծեցէք այս խնդիրը, որի կարևորութիւնը ոչ ոք չէ կարող ուրանալ։ Կամ պէտք է հերքել փաստերով կամ համաձայնել։

Սպասում ենք։ Հիմա սկսենք միւս երկու հարցերը ուսումնասիրելու. «ովքեր են ընտրողները և ուր պէտք է կատարվի ընտրութիւնը»։

Յակոբ Մեղաւորեան

Բաթում

ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐ

«Закавказье» թերթը հաղորդում է, որ Թիֆլիսում վերջերս յամառ կերպով լուրեր են պտտում, որ Թիֆլիսի նաւթային ֆիրմաները օգտվելով բնութեան ահեղ պատահարներից, մեծ քանակութեամբ եկած ձիւնից, փոթորիկներից և այլն, որոնց շնորհիւ մի տեսակ իրարանցում է ընկել ժողովրդի մէջ, գաղտնապէս սինդիկատ են կազմել և արհեստականապէս բարձրացրել նաւթի գինը, մինչդեռ Բագւում նաւթի գինը սովորականից չէ բարձրացել, իսկ նաւթի արտահանումը սովորականից պակաս չէ։

Ուրեմն ամբողջ յանցանքը ընկնում է մեր «բարեխիղճ» նաւթավաճառ ֆիրմաների վրա, որոնք ընդհանուր անտէրութիւնից օգտվելով՝ խեղճ ու կրակ բանուոր-արհեստաւորներից ու այլ ընչազուրկներից աւելորդ կոպէկներ են ուզում խլել և իրանց կապիտալի վրա աւելացնել։

Մենք անշուշտ տարօրինակ չենք համարում նաւթավաճառների այս կարգի տմարդի արարմունքը, որովհետև քաջ գիտենք, թէ նրանք հետևում են խլէ-խլէի սկզբունքին, առաջնորդվելով այն ասացուածքով, թէ՝ «Աշխարհս դմակ, մարդը դանակ, կարէ ու կեր»։ Մենք սրանով միայն ուզում ենք հասարակութեան ընչազուրկ տար-

ՖԷԼԻԷՏՕՆ

«ԺԸ Մ'ԱՆ ՖՈՒ»

«Ֆրանսիացիների ակումբի» երեկոյթ

—

— Monsieur Գրամմէզօն, ասացէք խնդրեմ, ի՞նչ ասել է «ժը մ'ան ֆու» (je m'en fous),—մօտեցաւ մի ֆրանսիացու մեր Մարտիրոսը։

Եւ յանկարծ մի շուարելու բան պատահեց։

Տիկնայք, քթները պինդ բռնած, մէկ րոպէի մէջ ցրվեցին։ Տղամարդիկ բարկացկոտ հայեացք գցեցին Մարտիրոսի վրա. մէկը ասաց. «C'est degoutant» (այսինքն՝ «զարշելի է»). տիկին Լեֆեվրը երկու մատով փակեց իր աղջիկ Լիւսիի ականջները, և մի ակնթարթում Մարտիրոսի շուրջը դատարկվեց, հանդիսականները քաշվեցին 3 սաժէն հեռու, կարծես ռումբ գցած լինէին դահլիճի մէջտեղը։

Խեղճ Մարտիրոսը շօշափեց իր օձիքը. չէ, փողպատը տեղն էր. նայեց վարտիքի կոճակներին, բոլորն էլ կոճկած են. մօտեցաւ հայելուն, շուռ ու մուռ եկաւ նրա առաջ. ամեն ինչ տեղն էր։ Մի լաւ զննեց սպիտակ շապիկը. ոչինչ չը կար։ Բաս ինչ պատահեց։

Ֆրանսիացիք, քաշված անկիւնները, ինչ-որ վրդովված խօսում էին, իսկ դամաները հովհարում էին իրանց կարմրած թշերը։

Մէկ էլ Գրամմէզօնը մօտեցաւ Մարտիրոսին, և հետևեալ դիալօգն սկսվեց նրանց միջև։

— Մարտիրոս Կիրակոսովիչ, մեր ակումբի կարգադրիչները վճռում են հեռացնել ձեզ, բայց դարձեալ ես ցանկանում եմ, որ դուք բացատրէք ձեր վարմունքը։ Ասացէք խնդրեմ, այդ ինչ выходка էր, այն էլ դամերի առաջ։

— Ներեցէք, պ. Գրամմէզօն... ես ուղղակի չեմ հասկանում, թէ ինչ է իմ մեղքը։

— Այդ էլ լաւ էր։ Մոռացաք ինչ ասացիք։

— Ե՞ս... Ես միայն հարցրի...

Բայց Գրամմէզօնը ափով փակեց նրա բերանը։

— Ի սէր Աստուծոյ... դարձեալ պիտի կրկնէք։

— Ախար ինչ կայ էլ։

Գրամմէզօնը ժպտաց, մատը ճակատին դրեց, մի ուրիշ տեսակ նայեց Մարտիրոսին ու ասաց.

— Ներեցէք, դուք բժշկի մօտ եղել էք։

— Այո, հէնց այսօր ատամնաբոյժի մօտ էի։

— Ոչ, դա ատամնաբոյժի գործը չէ...

— Mr. Գրամմէզօն, ախար ինչ եմ արել է...

— Դուք դեռ ասէք ինձ. Ո՞րտեղից էք լսել այդ խօսքերը։

— Ինչպէս թէ լսել։ Ես կարդացել եմ։

— Կարդացել էք,—գրեթէ գոռաց Գրամմէզօնը—Տնաշէն, Պօլ-դը-Կօկից դատ ուրիշ բան չը գտաք կարդալու։

— Ինչու՞ անպատճառ Պօլ-դը-Կօկ։ Մեր գրականութեան մէջ էլ սկսել են գործածել այդ բառը։

Գրամմէզօնը անհամբեր հայեացք գցեց Մարտիրոսի վրա ու կարեկցօրէն ասաց.

— Վաղը հրաւիրված եմ մի լաւ բժշկի մօտ, որը աշխատում է որքան կարելի է քիչ մարդ ուղարկել այն աշխարհը։ Եկէք, միասին գնանք, մի քիչ խօսենք... Լաւ կը լինի...

— Հաւատացնում եմ ձեզ, որ տրված է ֆրանսերէն տառերով.

— Այո, այո, mon pauvre ami, վաղը միասին կերթանք...

Մարտիրոսը մի քիչ նեղացաւ ու գրպանից հանեց լրագիրը և կոխեց անհաւատ ֆրանսիացու աչքերը։

— Ըհը՛, կարդացէք, տակն էլ ստորագրութիւն «յայտնի վիպասան և դրամատուրգ»։

Գրամմէզօնի դէմքը այլայլվեց։

— Ну, c'est trop (այդ արդէն չափազանց է)։ Հետաքրքրական է, թէ ինքը, գրողը, հասկացել է ինչ է գրել։

— Ի՞նչպէս թէ «հասկացել է»։ Ի հարկէ հասկացել է։ Քանի տարի Պարիզումն է ապրել։

— Ի՞նչ գործով։

— Հը՞, դուք հարցնում էք «ինչ գործով»։

— Այո... իսկապէս, ինչով էր պարապում։

— Ներեցէք, բայց ձեր հարցը շատ տարօրինակ է թւում ինձ։ Չէ՞ որ նա գրող է։

— Ну?

— Միթէ գրողը պիտի գործով պարապի։ Ազգը պարտաւոր է պահել նրան, քանի սաղ է։

— Դա... պատիւ է բերում ձեր ազգին... Բայց դարձեալ ափսոս է ստացած ուսումը։

— Ի՞նչ ուսում։

— Իր մասնագիտութիւնը, որ սովորել է համալսարանում։

— ?!

— ... կամ միջնակարգ դպրոցում։

— ??!

— ... Այդ էլ չէ...

— Ուսում հարկաւոր չէ։ Մարդ պէտք է բնական, ի ծնէ այնպիսի ուղեղ ունենայ, որ հարկ չը լինի ուսում առնելու, թէ չէ՞ ուսումը, համալսարանը հալեցնում են մարդու ուղեղը, գլուխը դատարկվում է, և մարդ դառնում է իրաւաբան, բժիշկ, ինժեներ, գիւղատնտես, մի խօսքով ողորմելի ինտելիգենտ։

— Ձեր բոլո՛ր գրողներն էլ այդպիսի կուսական ուղեղով են մնացել։

— Ի՜հ, դուք էլ. ինչպէս կարելի է դրան միւս ծրտի-պրտի գրողների հետ համեմատել։ Մեր միւս «գրող» կոչվածները, ինչպէս հասարակ բանուորներ կամ արհեստաւորներ, իրանց կեանքի մեծ մասը բանել են ու կէս-կուշտ, կէս-քաղցած մի կերպ ապրել են։ Ամենքն էլ ժիմար-ժիմար արհեստներով են պարապել։ Ա՛յ, մեր հանգուցեալ Պռօշեանցը լուսանկարիչ է եղել և իր ապարատով գիւղից գիւղ շրջել է ու ժողովրդի կեանքը ուսումնասիրել։ Մի ուրիշը 7 բ. բերև գրագիր ծառայել է, յետոյ տելեգրաֆիստ է եղել, յետոյ, չը գիտեմ, տպարաններումն է ծառայել և միևնոյն ժամանակ պատմութիւն է սովորել և աշխատանքից գրեթէ կուրացել է։ Ա՛յ, մի երրորդը գրաշար է եղել քանի տարի և, եթէ չեմ սխալվում, Մոսկվայի եկեղեցում շպիկ է հագել և միևնոյն ժամանակ սովորել է ու գրել։ Գրեթէ մեր բոլոր գրողներն այդպէս են։ Մի բանաստեղծ քաղցից գլորացել է ամբողջ կեանքը, ինչ աշխատանք ասես արել է, վերջը իրան մի կերպ գցել է Մոսկվա, որ մի բան սովորի. այնտեղ կարծեմ, փողոցներ աւելելով է ապրել մի քանի ժամանակ։ Շատերը ուսուցչութիւն են արել (ասենք՝ սրանք ցենզ են ունեցել)։

— Մեր մէջ էլ եղել են այդպիսի փուտբատօրներ, ռուսաց մէջ էլ շատ կան. էհ, համեստ մարդիկ են, էլի։

— Դէ ինչ զաղեր են դրանք, որ համեստ էլ չը լինեն։ Ա՛յ, կարդացել էք Վեսելօվսկիի անկետը... Հա՛մ ո՞րտեղից կարդացած լինէք, դուք ռուսերէն էլ լաւ չէք գիտում։ Հէնց «ну, ну!» գիտէք միայն... Ներեցէք, այնպէս դուրս թռաւ բերնիցս։ Հա՛, Վեսելօվսկին մեր բոլոր գրողներին հարցնում է, թէ ո՞ր ռուս հեղինակն է նրանց վրա աւելի ազդել։ Դէ, ամենքն ասում են՝ այս-ինչը, այն-ինչը և (ախար բան չեն հասկանում է՛) ռուս գրողներին գովում են։ Մի ջահել բանաստեղծ էլ, օրինակ, շատ անտեղի համեստութիւն է ցոյց տալիս։ Նա գրել է Վեսելօվսկիին. «Իմ հեղինակութիւնները այնքան աննշան են, որ հազիւ թէ առանձին ուշադրութեան արժանի լինեն»։ Մի ուրիշ բանաստեղծ՝ մինչև անգամ ասում է, որ ոչ միայն ռուս գրողները, այլ նոյնիսկ «հայ բանաստեղծները ազդեցութիւն են ունեցել ինձ վրա»։ Չի էլ ամաչում. հը՞։ Վերջացաւ։ Ամենքն էլ այդպէս իրանց նսեմացրել են... և մեր գրականութեան վարկը վայր գցել։ Միայն «ժը մ'ան ֆու»-ն է, որ բարձրացրել է մեր գրականութեան պատիւը։

— Молодецъ! Հիմի տեսնո՞ւմ էք, ինչքան ռուսերէն բառեր գիտեմ։ Դուք ասում էք, թէ...

— Նա գրում է Վեսելօվսկիին. «Ես դժուարանում եմ ասել, ունեցել է արդեօք ինձ վրա մի որևէ ռուս գրող մի առանձին ազդեցութիւն»։

— Էհ գուցէ չէ կարդացել, կամ կարդացել է ու չէ հասկացել, թէ չէ՝ Եւրոպայում այնքան սքանչանում են. Դօստոևսկին,

---

*) Տես «Մշակ» № 37.

բերի ուշադրութիւնը հրաւիրել այս թալանչիների արարմունքների վրա, որպէսզի նրանք չընկնեն սրանց թակարդը և միջոցներ գտնեն իրանց անխղճաբար շահագործողների սուր ճանկերից ազատվելու համար։ Խնայեցէք արեան և քրտնքի գնով վաստակած ձեր կոպէկները։

Յար. Գասպարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ*)

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 փետրվարի

Բիւջէտային յանձնաժողովի տեղեկաբեր Ալեքսէենկօից յետոյ հանդէս է գալիս ֆինանսների մինիստրը, որ երկու ժամ շարունակ լուսաբանում է եկամուտը ֆինանսական և տնտեսական կողմերից։ Մինիստրը յայտնում է, որ վերջին տարիները պետական եկամուտները բաւականին աճել են և միւս կողմից աւելանում են կուլտուրա-արտադրողական ծախքերը համարեա տարէցտարի, այնպէս որ 1907 թւից 229 միլիօն ծախքերը դարձել են 368 միլիօն, մինչդեռ համապետական պաշտպանութեան ծախքերը աւելացել են $15{,}6^0/_0$-ով։ Մինիստրը ուրախութիւն է յայտնում, որ այժմ պետական բանկում և գանձարանում գտնվում է 1810 միլիօնի ոսկի։ Յայտնելով, որ մինիստրութիւնը հաստատում է մանր վարկի զեմստվային գանձարաններ և խրախուսում է կօօպերատիվ ընկերութիւններին, մինիստրը իր երկար ճառի վերջում տարակուսում է, որ թէև ամեն ինչ այդպէս կարգին է, բայց և այնպէս ելնելու են մի շարք տարկողներ և պնդելու են՝ թէ ոչ մի բարելաւումն երկրի կեանքի պայմաններում չը կայ, ասելու են, որ եկամուտների աւելանալը սուտ խաբուսիկ է, որ երկրում ոչ մի տնտեսական բարձրացում գոյութիւն չունի և որ Ռուսաստանը գնում է ոչ թէ առաջ, այլ յետ, որ Ռուսաստանը քայքայվում է, և այլն, և այլն։

Մինիստրի ճառը ընդհատվում է աջակողմեանների և կենտրոնի երկար ծափահարութեամբ։

Որոշվում է հռետորների ճառերը չը սահմանափակել։

Շինգարեվը ընդգծում է, որ վերջին երկու տարիների բարենպաստ պայմանները մեր ֆինանսները հասցրին համեմատական լաւ դրութեան, և ընդգծում է, որ Դուման չը պէտք է տարվի ներկայ եկամտի գեղեցիկ ճակատից և պէտք է նրան մօտենայ լուրջ ու առողջ քննադատութեամբ։ Անալիզի ենթարկելով ազատ գումարների առաջանալը, որ հաշված են 305 միլիօն և կազմում են մեր բիւջէտի արտաքին կողմի գլխաւոր գեղեցկութիւններից մինը, հռետօրն այն եզրակացութեան է գալիս, որ այդ յաւելումը, իբրև մասամբ մնացորդ փոխառութիւններից, մասամբ աւելացված հարկերի հասոյթներից, չէ կարող համարվել երկրի աճող բարեկեցութեան կամ եկամուտի բնական աճման նշան։ Եկամտի միւս գեղեցկութիւնը, որ կայանում է եկամուտի առաւելութեան մէջ ծախքերից, կարող է կանոնաւոր ճանաչվել միայն պետական տնտեսութեան մի քանի ճիւղերի նըկատմամբ և բացատրվում է դարձեալ բացառապէս վերջին տարիների նպաստաւոր պայմաններով։ Միջին հաշւով ծախքերը անցնում են եկամուտներից։

Անցնելով ապա այն հարցին, թէ ինչ աստիճան մեր բիւջէն բաւարարեցնում է երկրի կուլտուրա-կրթական կարիքները, Շինգարեվը նկատում է, որ չնայած այդ ծախքերից մի քանիսը աճում են, և դրանում է Դումայի ծառայութիւնը։ Այնպիսի ծախքեր, ինչպէս օրինակ ժողովրդական կրթութեան ծախքերն են, իսկապէս աւելանում են նշանաւոր չափով հակառակ ֆինանսների մինիստրի ցանկութեան։ Տնտեսութեան մնացած բոլոր կուլտուրական ճիւղերի վերաբերութեամբ ծախքերի աւելանալը շատ չնչին է, և որտեղ որ նա երևում է, էլի չէ համապատասխանում իրապէս հասունացած պահանջներին։

Դիմելով այն հարցին, թէ ինչպէս է կազմվում բիւջէն և ինչպէս են ծախսվում գումարները, հռետորը վկայում է, որ Դումայի գործունէութիւնը չորս տարիների ընթացքում մինիստրութիւնների ներկայացրած նախահաշիւների ընդհանուր բնաւորութիւնը բաւականին բարելաւել է, թէև հեռու է կատարելութիւնից։ Այդ տեսակէտից բիւջէն դեռ ևս չէ ազատվել մեծ չարիքից, այն է պայմանական գումարայատկացումներից։ Միևնոյնը կարելի է ասել նախահաշւից դուրս և լրացուցիչ կերպով կատարվող ծախքերի մասին, որոնց մինիստրութիւնները ի չարն են գործ դնում։ Ցանցքի մեծ մասը երկու դէպքերում էլ ընկնում է զինուորական մինիստրութեան վրա։ Գումարների փոփոխակի ծախսելը մինիստրութիւնները գործադրում են շատ լայն կերպով, այնպէս որ Դուման, տալով փողեր, չէ կարող հաւատացած լինել՝ թէ ինչի վրա են գործադրվելու նրանք։ Եկամտի դաշտերում հետ ծանօթանալիս հանդիպում էք ուղղակի անօրինաչափ գործողութիւնների, օրինակ գիւղութեանց ճեմարանին պետական տպարանին պատկանեալ հողաբաժինը, հակառակ Դումայի որոշման, Պետական Խորհրդի հաստատման և Միապետի հաւանութեան, տալու հարցում։ Հռետորը մատնանշում է նաև Թիւրքիայի պարտքը Բօլգարիայի վրա ձգելու խորդութիւնը, որ կատարվեց առանց Դումայի մասնակցութեան, և որից ռուսական պետական գանձարանը վնասվեց $15^1/_2$ միլիօն րուբլի։ Այս խնդրում յանցանքի խոշոր մասն էլ ընկնում է Դումայի վրա, որ ոչ մի զեկուցում նախահաշւի մասին չը լսեց, բիւջէտային կանոնների փոփոխութիւնների նախագիծը չը քննեց։

Այնուհետև հռետորը անցնում է բնորոշելու պետական տնտեսութեան ներքին կեանքը։ Ընդգծելով, որ ներքին քաղաքականութիւնը պտտվում է հողային հարցի շուրջ, և կանգ առնելով կառավարութեան այն ձեռնարկութիւնների վրա, որոնք ուղղված են լուծելու այդ հարցը, հռետորը մանրամասն անալիզի է ենթարկում և քննադատում է գաղթականութեան գործը, գիւղացիական բանկի գործունէութիւնը, և ապացուցանում է, որ դրանց վրա կառուցված շինութեան ճակատը այնքան էլ լաւը չէ, իսկ նրա ներքին բովանդակութիւնը աւելի վատ է։ Քննադատելով հուսկ յետոյ անտառային տնտեսութիւնը, լեռնային վարչութիւնը, ճանապարհների հաղորդակցութեան և պետական պաշտպանութեան մինիստրութիւնները, Շինգարեվը ընդգծում է, որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը, ճիշդ է, մի փոքր զովել է, բայց ինչ վերաբերում է միևնոյն մինիստրութեան ջրային և խճուղային ճանապարհների վարչութեան, նա թողնում է ամենածանր տպաւորութիւն։ Ծովային մինիստրութիւնը լիակատար քայքայման պատկեր է ներկայացնում և յամառօրէն չէ կամենում ըմբռնել այդ և ընդառաջ գնալ Դումայի ցուցումներին, հանդիսանալով անփութութեան և գործի անտնտես կառավարութեան հազւագիւտ օրինակ։

Մի խօսքով, Շինգարեվի կարծիքով, արքունի տնտեսութեան բովանդակ ներքինը գեղեցիկ շէնքի ետեւում այնքան էլ գեղեցիկ չէ։ Յետոյ հռետորը կանգ է առնում պետական կօնտրոլի դրութեան վրա, ապացուցելով որ կօնտրոլը պէտք է լինի անկախ և ինքնուրոյն։ Մինչդեռ այդ միտքը, որ պաշտպանում է Դուման, հանդիպում է միացեալ կառավարութեան լիակատար արհամարհանքին, իսկ գոյութիւն ունեցող կօնտրոլի կազմակերպութիւնը ուղղված է քայքայելու պետական ծառայողներին և խեղաթիւրելու պետական կազմակերպութիւնը։

Անցնելով ապա ժողովրդական տնտեսութեան դրութեան և ֆինանսական քաղաքականութեան, Շինգարեվը գտնում է, որ խօսել տնտեսական և արդիւնաբերական կեանքի լիակատար բարեկեցութեան մասին հարկ չը կայ, մինիստրի յայտարարութեան մէջ գլխաւոր դեֆեկտ Շինգարեվը համարում է նրա վերաբերմունքը դէպի տեղական ֆինանսների զարգացման հարցը և մատնանշում է, որ զեմստվօները և քաղաքները համարեա իրանց կաշուից դուրս են գալիս, սակայն ոչ մի հիմք առանց տեղական ֆինանսների զարգացման չէ կարելի գնել։ Շօշափելով վերջում Դումայի աշխատանքների ընդհանուր պայմանները և դիմելով արդէն ոչ մինիստրին, այլ միացեալ կառավարութեան, Շինգարեվը ասում է, որ չը նայած նրան, որ ամեն ինչ հանգիստ է, մահապատիժները շարունակվում են, պատերազմական դրութիւնները շարունակում են գործել, իսկ այդ ամենին, եթէ հաճելի է գնալ կեանքը առողջացնելու ճանապարհով, հարկաւոր է վերջ տալ։ «Պէտք է դէն շպրտել նաև միմոսական հայրենասիրութիւնը, և եթէ դուք—վերջացնում է Շինգարեվը,—բաւականութեան փոխարէն խորասուզվէք ժամանակակից ռուսական կեանքը, գոյութիւն ունեցող հանուր վշտի և չարիքի մէջ, այն դէպքում դուք կասէք, որ ռուսական բիւջէի տակ հիմք չը կայ»։ (Ծափահարութիւն օպպօզիցիայում, սուլոց աջից)։

Դուման որոշում է նիստերը ամեն օր, բացի հինգշաբթի օրերից, բիւջէի քննութեան համար, և չորեքշաբթի երեկոյեան նիստերը նուիրել առաջվայ պէս հարցապնդումներին։

---

*) Տես «Մշակ» № 37.

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Մենք ստացանք մի հարիւր (100) րուբլի Աստուածատուր և Թէոդորոս Խաչատրեաններից՝ առաջինի հանգուցեալ եղբօր, իսկ երկրորդի հօրեղբօր՝ Ալէքսան Խաչատրեանցի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, յատկացնելու բարեգործական նըպատակի։ Այդ 100 րուբլին, համաձայն յօժարութեան նուիրատուների, բաժանեցինք այսպէս. 1) Թիֆլիսի Հայոց Որբախնամ Ընկերութեան 25 ր., 2) «Մեղու» ընկերութեան 25 ր., 3) էժանագին և ձրի ճաշարանին 25 ր. և 4) յօգուտ չքաւոր ուսանողների 25 ր.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը 1910/11 թ. թ. սեզօնը փակեց մօտ 1000 րուբլի դեֆիցիտով։ Անցեալ օրը վարչութիւնը ներկայացաւ Ալ. Մանթաշեանին և թոյլտուութիւն խնդրեց այդ դեֆիցիտը փակել եկող տարվայ նպաստներից։ Ալ. Մանթաշեան այնքան սիրալիր գտնվեց, որ համաձայնութիւն յայտնեց, անկախ՝ սովորական նպաստից, տալ իր հաշւից նաև մի 1000 րուբլի՝ ծածկելու յիշեալ դեֆիցիտը։

◆ «Кавказъ»-ը հաղորդում է, որ հայրենասիրական բրօշիւրների և պատկերների յայտնի հրատարակիչ գեներալ Ի. Բօգդանովիչը, կովկասեան ուսումնարանական շըրջանի հոգաբարձուի խնդրանօք, ուղարկել է ժողովրդական դպրոցների աշակերտներին ձրիաբար բաժանելու համար 800 օրինակ «Գիւղացիների ազատութեան 50-ամեակը» գրքոյկից։

◆ Կովկասեան ուսումնարանական շըրջանի հոգաբարձու Ռուդօլֆի կարգադրութեամբ տարրական դպրոցներն ուղարկվեցին սաներին բաժանելու համար «Փետրվարի 19-ի մեծ օրը» բրօշիւրից 2500 օրինակ։

◆ Յիշեցնում ենք, որ այսօր Ժողովրդական Տանը երեկոյեան կայանալու է Պաւլովի դասախօսութիւնը հրաբուխների և երկրաշարժների մասին։

◆ Քաղաքային յանձնաժողովը էլեքտրաքարշի ընկերութեանը ենթարկեց վճարել 9,152 րուբլի տուգանք՝ պակաս թւով վագոններ աշխատանքի հանելուն համար։

◆ Այս շաբաթ արձակված են քաղաքային բոլոր դպրոցների աշակերտ-աշակերտուհիները՝ հաղորդվելու համար։

◆ Թիֆլիսի վաճառականները եռանդով պատրաստութիւններ են տեսնում մասնակցելու քաղաքային ձայնաւորների ընտրութիւններին։ Վաճառականները կամենում են դումայում ունենալ իրանց մարդկանց։

◆ Թիֆլիսի Արքունական թատրոնում Անտօն Լյուբենվալդի օպերային խումբը իր գործունէութիւնը սկսեց 1910 թւի սեպտեմբերի 18-ին և աւարտեց 1911 թ. փետրվարի 20-ին, ուրեմն ընդամենը 156 օր, որից 150 օրվայ ընթացքում խումբը տուեց 159 ներկայացում։ Նոր օպերաների թիւը հասաւ 56-ի։ Ինչպէս յայտնի է, եկող թատրոնական սեզօնի համար Արքունական թատրոնը վերցրել է կրկին Լյուբենվալդը։

◆ Մեծ պասի ընթացքում Թիֆլիսի Արքունական թատրոնում ներկայացումներ է տալու Եա. Բօրանիկօվի ռուս դրամատիկական խումբը։ Առաջին ներկայացումը նշանակված է փետրվարի 28-ին և կը խաղացվի «Համլետը»։

◆ Դերասանների մի խումբ, բաղկացած Աբէլեանից, Արմէնեանից, տ. Դուրեան-Արմէնեանից և այլն, արդէն մեկնեց Բաքու, որտեղ 7 ներկայացում տալուց յետոյ Նոր-Նախիջեւանի վրայով կանցնէ Մօսկվա։ Երկրորդ խումբը՝ բաղկացած տ. Մայսուրեանից, պ. պ. Զարիֆեանից, Յարութիւնեանից և այլն՝ մեկնեց Երեւան։

◆ Ճշդվում է այն լուրը, որ Խ. Աֆրիկեան իր հաշւով արտասահման է ուղարկելու դերասան Շահխաթունուն՝ կատարելագործվելու համար։

◆ Լրագիրները հաղորդում են, որ դերասանուհի Դուրեան-Արմէնեան Մանթաշեանի հաշւով մեկնում է Պարիզ կոկորդը բժշկելու համար։

◆ Ընթացք է տրված Թիֆլիսի և Բաքուի միջև հեռախօս հաստատելու հարցին։

◆ Թէհրանից հեռագրում են «Баку»-ին, որ ամենուրեք ցնծում են ռուսաց զօրքերի հեռանալու առիթով։

◆ Բինագադում փետրվարի 20-ին խփել է ֆօնտան Սալիմօվի նաւթահորից, տալով 2 ժամվայ մէջ 2500 փութ մաքուր նաւթ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ տուգանքի են ենթարկվում. իշխ. Գէօրգի Ջալօովիչ Մաչաբէլին փողոցում անկարգութիւն անելուն համար 10 ր. կամ 3 օրով բանտարկութեան. Դարչօ Շարաբօվ ոստիկանութեան պաշտօնեային վիրաւորելուն համար 25 ր., Թամարա Թավարթկիլաձէն և Միխայիլ Գոչէչիլաձէն տպարանների կանոնները խախտելուն համար 10 րուբլի։

◆ Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ 500 ր. տուգանքի է ենթարկվում կամ 3 ամսով բանտարկութեան Եակօվ Ջինջմանը առանց վկայականի ատրճանակ կրելու համար։

◆ 12-րդ քաղաքամասի ոստիկանական պաշտօնեաները էլեքտրաքարշի վերատեսչի օգնական Գիսսի սպանութեան առիթով կասկածով ձերբակալել են Դեմենտի Սրուլաձէին, որ յայտնի է տէրրօրիստական գործերին մասնակցելով։

◆ Փետրվարի 22-ին, երեկոյեան ժամը 9-ին, Միքայէլեան փողոցում № 153 տան դռնապ. Պիստօ Տամօ-օղլին № 152 տան մայթի վրայից բարձրացրեց անզգայ դրութեան մէջ, ըստ երեւոյթին թունաւորված, մի ռուս 27—28 տարեկան կնոջ։ Անյայտ կինը ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Փետրվարի 22-ին № 60 աւտօմօբիլը, որ կառավարում էր Գէօրգի Կիլիմանին, Միքայէլեան փողոցով Մուշտայիդի մօտերը ընկաւ էլեքտրաքարշի երկու վագոնների մէջ տեղը և ջարդվեց։ Թէև մարդկանց հետ դժբաղդութիւն չեղաւ, բայց աւտօմօբիլի տէրը վնասվեց 1,000 ր. չափ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Փետրվարի 19-ին, ճորտատիրութեան վերացման 50-ամեայ յօբելեանի օրը, դասախօսութիւններ կարդացվեցին վրացերէն լեզւով Հաւլաբարում և Նախալօվկայում։ Աւճալեան աուդիտօրիայում տեղի ունեցաւ ներկայացում վրացերէն լեզւով, րեժիսօրութեամբ դերասան Գ. Գէղէվանօվի (Միքաղեան)։ Ներկայացումից առաջ Ս. Մգալօբլիշվիլին կարդաց մի դասախօսութիւն «ճորտատիրութեան վերացման նշանակութեան մասին», որին կցեց իր յիշողութիւնները։

◆ Անգլիացի վրացագէտ Օլիվէր Ուարդրօպ, որ վերջերս Թիֆլիս էր ժամանել, այս օրերս մեկնեց և ճանապարհից մի գրութեամբ, յանուն վրաց «Թեմի» լրագրի խմբագրութեան, շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձանց և հիմնարկութիւններին, որոնք իրան յարգում են։

◆ Մեզ գրում են Արխանգելսկի նահանգի Օնէգա աւանից, որ տեղում անցեալ տարվայ օգոստոսի 25-ին սպանվել է վրացի աքսորական Զախարի Կակուրաշվիլին։ Հանգուցեալը Դուշէթի գաւառից է եղել և մի տարի առաջ վերջացնելով աքսորաժամը՝ հնարաւորութիւն չէ ունեցել հայրենիք վերադառնալու, նիւթական միջոցների բացակայութեան պատճառով։

Նա յուսահատ վիճակի մէջ գտնվելով արբեցողութեամբ է եղել պարապելիս ռուս բօսեակների հետ, երբ և սպանվել է։

◆ Վրաց յայտնի կին գրող Եկատերինա Գաբաշվիլիի գրական-հասարակական գործունէութեան յօբելեանը, որ պիտի կատարվէր առաջիկայ մարտի 5-ին, յօբելեանական յանձնաժողովի կողմից յետաձգվել է զատկական տօներից յետոյ։ Այս վճիռը կապ ունի տիկնոջ ցանկութեան հետ, որ չուզեց այժմ յօբելեան սարքել, երբ Սրամոհան Անդրովկասը մեծ դժբաղդութեան մէջ է։

◆ Քութայիսի նորընտիր քաղաքագլուխ Իլիա Ջիքօվանին երկար տարիների ընթացքում աշխատակցել է վրաց թերթերին։ Նա գրել է նմանապէս բանաստեղծութիւններ և շարունակ եռանդուն մասնակցութիւն է ունեցել վրաց հասարակական գործերում։

Իակօբ Փանցխավան, որը Ջիքօվանիից առաջ քաղաքագլուխ էր ընտրվել և որին նահանգապետը չը հաստատեց այդ պաշտօնի մէջ, այժմս միաձայնութեամբ ընտրվել է Քութայիսի քաղաքային վարչութեան անդամ։

◆ Քութայիսում կազմվել է յօբելեանական մի յանձնաժողով, որը պիտի կազմակերպէ յօբելեանական ներկայացումներ դերասան Կոտէ Մեսխիի բեմական գործունէութեան 30-ամեակի լրման առիթով, որի յօբելեանը անցեալ տարվայ վերջերը կատարվեց Թիֆլիսում։

Յօբելեանական ներկայացումներ տեղի կունենան նաև Բաթումում, Բաքւում, Ալէքսանդրօպօլում, Օզուրգէթում, Փօթիում, Սուխումում, Գագրիում և այլն։

◆ Կիրակի, ամսիս 20-ին, Նաւթլուղի դպրոցում, որ բացված է Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան ջանքերով, կայացաւ գրական ցերեկոյթ, ի յիշատակ փետրվարի 19-ի ակտի։

Մանդոլինիստների խումբը նուագեց մի քանի եղանակներ, որից յետոյ աշակերտուհիներից մի քանիսը արտասանեցին ոտանաւորներ։ Ապա դպրոցի հոգաբարձու Զ. Կիրակօսեանը բացատրելով ուսման և առհասարակ նման հանդէսների կրթիչ նշանակութիւնը, շնորհակալութիւն յայտնեց ցերեկոյթի նախաձեռնողներին՝ ուսուցչուհիներ Կալանդարաշվիլիին և Ն. Ս. Գասպարեանին։ Ներկայ եղող ծնողները շնորհակալութիւն յայտնեցին նախաձեռնողներին նմանապէս։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ախալցխա, 18 փետրվարի

Տեղիս դրամատիկական սիրողների ընկերութեան վարչութիւնը, մասնակցութեամբ դերասան Թաշճեանի և սիրողների, Կարապետեան դպրոցի դահլիճում տուեց մի ներկայացում։ Խաղացին «Մեծապատիւ մուրացկաններ» և «Նախ մեռան, յետոյ ամուսնացան» կատակերգութիւնները։

Առաջնի մէջ Աբիսողոմ աղայի դերը պ. Թաշճեանը տարաւ շատ գեղեցիկ կերպով։ Վատ չէր պ. Միհրանը Մանուկ-աղայի դերում. պ. պ. Անանեանը (բանաստեղծ), Արէնը (խմբագիր), Քիւրքճեանը (լուսանկարիչ և դերասան), Սիրունեանը (բժիշկ) և օր. Համբարձումեանը (Մանուկ-աղայի կին) նեղութիւն չէին կրել իրանց դերերը սերտել և աչքները յառած յուշարարի վրա՝ դասը չիմացող աշակերտների պէս կմկըմում էին։

Երկրորդի մէջ շատ հիանալի Օսիպ Ֆէօդօրօվիչն էր պ. Թաշճեանը։ Միւսները դերերը չը գիտէին։

Դահլիճը դատարկ էր այնքան, որ կարգադրիչը ստիպված եղաւ փողոցից մարդիկ հրաւիրել տալ ներկայացմանը ձրի ներկայ լինելու համար, սակայն այդ էլ չօգնեց։ Հասարակութեան մի մասը լայեղ չէ անում Կարապետեան դպրոցում տրվող ներկայացումներին գալ, մի մասն էլ բարեկենդանի պատճառով զբաղված է թղթախաղով ու քէֆերով։

Ախպէր

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջին ժամանակներս ստացանք. 1) «Աշխատանք»՝ շաբաթաթերթ գրական, քաղաքական, տնտեսական. հրատարակվում է Վան քաղաքում 1910 թ. նոյեմբեր ամսից. գինն է Ռուսաստանի համար 5 րուբլի։ 2) «Հայկունի», կիսամսեայ հանդէս նորահասներու. սկսել է հրատարակվել Մարզուան քաղաքում 1910 թ. նոյեմբ. 15-ից. ստացել ենք միայն 1-ին և 3-րդ համարները. գինն է $4^1/_2$ ֆրանկ։ 3) «Բիւթանիա», տասնօրեայ գաւառաթերթ ազգային, գրական, քաղաքական, տնտեսական. հրատարակվում է Իզմիտ քաղաքում. բաժնեգինն է 6 ֆրանկ։ 4) «Տաճար», ժողովրդական շաբաթաթերթ կրօնական, ազգային և գրական. հրատարակվում է Կ. Պօլսում հայ եկեղեցական դասի ղեկավարութեամբ։ 5) «Նոր-Դպրոց», օրգան Ուսուցչ. Միութեան. այս յունվարից հրատարակվում է իբրև շաբաթաթերթ. ստացանք 1 և 2 համարները։ 6) «Բազմավէպ» ամսագրի յունվարի համարը։ 7) «Աղբիւր» պատկերազարդ ամսագրի յունվարի համարը, որ պարունակում է Պետրոս Սիմէօնեանցի և Մատթէոս Բ. Կաթողիկոսի պատկերները։ 8) «Առողջապահ», պատկերազարդ ամսաթերթ, հրատարակութիւն «Աղբիւր-Տարազի», № 85, յունվարի համարը, որ պարունակում է և Մեչնիկօվի պատկերը։ 9) «Հասկեր» մանկական պատկերազարդ ամսագրի յունվարի համարը։ 10) «Կոչնակ», շաբաթաթերթ, հրատարակվում է Նիւ-Եօրքում, թիւ 3, որ պարունակում է Մատթէոս Բ. Կաթողիկոսի մի շատ աջողված պատկերը։ 11) «Պատանի» գրական ժողովածուի II գրքոյկը, որի հրատարակողներն են Մ. Եփրիկեան և Ն. Մկրտչեան։ 12) «Աստղ Բեթղեհէմի», ամսաթերթ հոգևոր արարչագիտական, որ հրատարակվում

Տուրգենեւ, Չեխով, Տօլստոյ, Գօրկի. նոյնիսկ աշխատում են նմանողութիւն անել։

— Ովքեր. Գօրկի, Չեխով, դրանցով էք սքանչանում։ Հը՛, հը՛, գիտէք ինչ են ձեր Չեխովը կամ Գօրկին։ Ռուսերէն ասեմ, կը հասկանա՞ք. «Чеховъ, по моему, это—одна скука; я видѣлъ пьесы этого писателя и спалъ на представленіяхъ». Ահա թէ ինչ է ասում մեր դրամատուրգը Չեխովի մասին։ Գօրկին կուզէք։ Նա «խոշոր տաղանդ է (ներողամտաբար է ասում «տաղանդ») և մնալով իբրև հասարակ бытописатель, նա աւելի բան արած կը լինէր ռուս գրականութեան համար»... Տեսնում էք. մինչև անգամ փայլուն նման գուշակութիւններ էլ անել գիտեն։

— Ну, պարզ է, որ չէ հասկացել ոչ Չեխովին, ոչ էլ Գօրկիին։

— Կը ներէք, մօսիօ։

— Այդ դէպքում պէտք է ենթադրել, որ ռուսաց և եւրօպական քննադատները չեն հասկացել այդ գրողներին։

— Очень просто!

— Հը՛, հը՛, հետաքրքրական ժողովուրդ էք։

— Եւ ի հարկէ ազգը գնահատում է։

— Շատ բան է գրել...

— Շա՛տ. ասում են երեսուն տարի է միայն, ինչ նա մեծ հեղինակի հռչակ ունի և արդէն չորս-հինգ հատոր բան է գրել։

— Օյ, օյ, օյ... C'est epatant.

— Հըլա երեք հատ էլ դրամա։

— Սանք քանակը նշանակութիւն չունի։ Սերվանտէսը, Դանտէն, Գրիբօյեդօվը և հէնց ձեր Սունդուկեանը մէկ-մէկ գիրք են միայն գրել...

— Եւ դեռ ինչ-որ բժիշկներ չեն հաւանում։ Դէ տեսէք է։ Ասում են՝ այս-ինչ գիտնականը այսպէս է ասում, այն-ինչը՝ այնպէս։ Իբր թէ մեր դրամատուրգը հոգեբանութիւն չը գիտի։

— Դէ, իսկապէս որտեղից գիտենայ է, որ ոչինչ չը սովորել...

— Ինչպէս տեսնում եմ, դուք էլ այն տարօրինակ գլուխների կարծիքին էք, թէ մի մարդ որ ոչինչ չէ սովորել՝ չէ կարող ամեն բան իմանալ։

— Չէ, դուք չը հասկացաք... ես հէնց այնպէս ասացի... էն, որ ազգի մէջ այդ ձեր ասած բժշկի նման անբես մարդիկ չը կան։ Ա՛յ, մեր երկրումն էլ բժիշկները վեր են կենում ու հեղինակների հերոսների հոգեբանութիւնը քննադատում. օրինակ, Loygue, Դեժերին (կարծեմ) և ուրիշները։ Լաւ չեմ յիշում անունները։ Մինչև անգամ մէկը վեր է կացել ու Յիսուսի ուսմունքը և նրա սեփական կեանքը քննադատել է հոգեբանական տեսակէտից. անունը Բինէ Սանգլէ է։ Ռուսաստանում էլ բժ. պրօֆ. Կօվալևսկին քննադատել է Հին-Կտակարանը։ Բժ. Չիժը, բժ. Բաժենովը՝ ռուս հեղինակների, օրինակ Դոստոևսկիի, հերոսներին։ Դէ եթէ Հին-Կտակարանը և Քրիստոսի իրա հոգեբանութիւնն են քննադատում...

— Ну, առնենք Հ.-Կտակարանը, Աւետարանը, Դոստոևսկին և այլն, դրանց գուցէ և կարելի է, բայց մեր «ժը մա՛ն ֆու»-ին ինչպէս կարող է մի բժիշկ... չեմ հասկանում, էլի՛...

— Ես էլ չեմ հասկանում, միայն ուրիշ կողմից։ Սակայն այդ մնայ։

(Վերջը միւս անգամ)

է Կ. Պոլսում այս տարվայ յունվար ամսից, Մանուկ Գօչունեանի ղեկավարութեամբ. գինն է 4 ֆրանկ։ 13) «Մեր կեանքը», գրական-հասարակական շաբաթաթերթ. հրատարակվում է Աստրախանում Աբէլ Ապրեսեանի խմբագրութեամբ։ 14) «Լոյս», գրական - հասարակական շաբաթաթերթի (Նոր-Նախիջևան) 1, 2, 3, 4, 5 և 6 համարները։ 15) «Փարոս», ամսաթերթ ազգային-ընկերական, գրական բարոյական. հրատարակվում է Պարտիզակում (Իզմիտ), տպագրվում է Կ. Պոլիս. գինն է 4 ֆրանկ։ 16) «Կոհակ», պատկերազարդ թերթ, գրական, քաղաքական, տնտեսական և ընկերային. հրատարակվում է այս տարվայ յունվարից, գինն է (°), խմբագիրն է Հմայեակ Արամեանց։ 17) «Ոստան», եռամսեայ մեծ պարբերագիր, արուեստներու, գրականութեանց և գիտութեանց, Ա. տարի, № 1, Կ. Պոլիս, խմբագիրներ՝ Միք. Շամտանճեան և Տ. Չէօքիւրեան։ 18) „Міръ", ежемѣсячный литературный, научный, общественно-политическій журналъ, № 1, январь 1911 г., մի գեղեցիկ պատկերազարդ և ճոխ բովանդակութեամբ ամսագիր, որ հրատարակվում է Պետերբուրգում ահա 4-րդ տարին է. գինն է 8 ր. տարեկան։ 19) „Новая Жизнь" журналъ, литературы, науки и общественной жизни, 1911 г., январь № 2. պատկերազարդ և համակրելի ուղղութեամբ մի ամսագիր, գինն է 4 ր. 50 կ.։ 20) „Искры Жизни", ежемѣсячный, иллюстрированный, литературный и научно-популярный журналъ, որ հրատարակվում է Պետերբուրգում, 1910 թ. հոկտեմբեր ամսից սկսած, և գինն է տարեկան 75 կոպէկ։ Ցանկացողները կարող են բաժանորդագրվել «Մշակի» միջոցով։ 21) Mècheroutiette, „Constitutionnel Ottoman", organe du Parti Radical Ottoman, հրատարակվում է Պարիզում Շէրիֆ փաշայի ղեկավարութեամբ և օսմանեան արմատական կուսակցութեան օրգանն է, գինն է 10 ֆրանկ տարեկան։ 22) „Journal Asiatique", Ֆրանսիական Ասիական Ընկերութեան պաշտօնական օրգանը, 1910 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի համարը։ 23) „Школа и Жизнь", еженедѣльная, общественно-педагогическая газета, հրատարակվում է Պետերբուրգում, գինն է 6 ր. տարեկան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վաւերաթղթեր կեղծողը

Մոսկվա, 15 փետրվարի

Թէ որպէս անհատ և թէ որպէս գրող, ես շարունակ եղել եմ «Մշակի» հակառակորդների շարքերում ու, ինչ աւել կուզի, առանձին քնքոյշ զգացմունքներ չեմ ունեցել «Մշակի» ղեկավարների վերաբերմամբ։ Բայց այս րոպէիս հայ գրող Լէօն Հ. Առաքելեանի հասցէին գրած իր յօդուածում («Հորիզոն» № 26) այնպիսի մի անխիղճ նահատակութեան է մատնել հայ ընթերցող հասարակութեան խիղճը, համբերութիւնն ու ճշմարտասիրութիւնը, որ առանց մի րոպէ վարանելու՝ ես դիմում եմ «Մշակի» խմբագրութեան ու տեղ խնդրում իմ բողոքի ու զայրոյթի արտայայտութեան համար։

Յոյս ունեմ, որ չէզոք ընթերցողի խօսքը տեղ կը գտնի «Մշակում»։

Խաչ քաշեց իր ամբողջ գրական-հրապարակախօսական գործունէութեան վրա Լէօն։

Նա ուրացաւ, չեղած հրատարակեց այն խօսքերը, որոնցով որակել է իր եռահատոր «Գրիգոր Արծրունու» մէջ «Մշակի» խմբագիրներից Համբարձում Առաքելեանին։

Հ. Առաքելեանի մասին ես ունեմ իմ կարծիքը և այդ կարծիքը իր ժամանակին յայտնել եմ «Հովիտի» էջերում. նպաստաւոր չէ այդ կարծիքը։ Եւ եթէ այժմ ես գրիչ եմ առնում ձեռքս, ի հարկէ, ոչ Առաքելեանին պաշտպանելու համար,—նա ինքը կարող է պաշտպանվել,—այլ որ՝ Լէօի արած քայլն այնքան անլնդունելի է ինքնին, որ չը խօսել այդ մասին՝ նշանակում է սրբագործել գրական այդ չեղած, չը տեսնված արարքը։

Որ Լէօն կրքոտ մարդ է և նրա աշխատութիւնների մէջ գերակշռում է անձնական էլեմենտը, այդ գիտեն ամենքը, և հէնց «Հովիտի» մէջ քիչ առաջ մենք փաստերով ու օրինակներով այդ ապացուցինք (№ 3)։ Բայց որ կիրքը կարողանար կորցնել տալ Լէօին հաւասարակշռութիւնը մինչ այն աստիճան, որ նա փշրէր իր երէկվայ կուռքերն ու հրաժարվէր իր լիակատար ստորագրութեամբ հրապարակ հանած խօսքերից, ո՛չ, այդքանը նոյնիսկ Լէօից չէր կարող սպասել։

Այդ անօրինակ դէպքը ցոյց է տալիս, թէ ինչ արժէք է տալիս իր խօսքերին հէնց ինքը՝ Լէօն...

Իր այդ նշանաւոր յայտարարութիւնից յետոյ ինչ կը հրամայի ինձ անել Լէօն իր աշխատութիւնների վերաբերմամբ։ Ի՞նչ արժէք կը հրամայի, որ տամ իր գրուածքներին, այնքան ապլոմբով ու վստահութեամբ արտայայտած իր կարծիքներին ու եզրակացութիւններին...

Նա, որ 30 տարի գրելուց յետոյ առանց կարմրելու, նոյնիսկ յոխորտանքով յայտարարում է, որ ինքը «սաստիկ մեղանչել է ճշմարտութեան ու վաւերագրերի դէմ», այդպիսի գրողը այլ ևս իրաւունք չունի պահանջելու կամ սպասելու, որ այսուհետև հաւատի ու յարգանքի մի փոքրիկ նշան անգամ ունենան իր վերաբերմամբ ընթերցողները։

Ընթերցողի հաւատն այդչափ անխղճաբար շահագործելուց յետոյ Լէօն պիտի հաշտվի այն մտքի հետ, որ ինքն այլ ևս կորած է շիտակ գրական գործիչների շարքից։

Ամբողջ 30 տարի Լէօն ստել է, խաբել է, «մեղանչել է ճշմարտութեան ու վաւերաթղթերի դէմ»։

Ինքն է ասում այդ...

Լա՛ւ լսեցէք, ընթերցող, ու գիտցէք, թէ ում հետ այսուհետև գործ ունէք։ Լէօն 30 տարի շարունակ «մեղանչել է ճշմարտութեան ու վաւերաթղթերի դէմ» ու խաբել մեզ՝ ընթերցողներիս, շահագործել մեր հաւատը ու այժմ էլ խոստովանում է իր խաբեբայութիւնն ու մինչև իսկ պարծանք համարում այդ՝ իր համար։

Բայց մենք ոչ մի գարանտիա չունենք, որ վաղն էլ նա իր այսօրվայ խօսքերը չի ուրանայ ու յայտարարի կեղծ ու չեղած...

Պարծեցէք, պ. Լէօ, ոչ ոք չի նախանձի ձեզ. կարող էք հաւատացած լինել։ Ոչ ոք չի ցանկանայ ձեր դերի մէջ լինել, բայց մի մոռանաք լատինական ասացուածքը՝ «Est modus in rebus»!

Ն. Միւրզաշիր

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ *Սավարքարի գործը միջնորդ դատարանում.*—«Մշակի» № 34-ում մենք հաղորդել էինք, որ երիտասարդ հնդիկ, հակաանգլիական ագիտատոր Սավարքարի գործը յանձնվեց Հաագայի միջազգային միջնորդ դատարանի քննութեան։

Այժմս այդ քննութիւնը վերջացել է յօգուտ Անգլիայի։

Հաագայի միջնորդ դատարանը, միանալով Անգլիայի ներկայացուցչի կարծիքին, որոշեց, որ վերջինս պարտաւոր չէ Ֆրանսիային դարձնելու Սավարքարին, որպէսզի նա սրան ազատ արձակէ։

Դատարանը եկաւ այն եզրակացութեան, որ Ֆրանսիայի գերիշխանութիւնը խախտված չէ, որովհետև Սավարքարը ձերբակալվեց ֆրանսիական ոստիկանութեան օգնութեամբ։

Իսկ ինչ վերաբերում է ֆրանսիական ոստիկանութեան անկանոն գործունէութեան հնարաւորութեանը և ի մասնաւորի ֆրանսիական ժանդարմների ձեռքով կատարված ապօրէն յանձնումին, դատարանը գտնում է, որ միջազգային իրաւունքը չէ նախատեսում անկանոն կերպով յանձնվածի վերադարձը։

Անգլիական պահպանողական և չափաւոր ազատամիտ մամուլը ողջունում է Հաագայի դատարանի որոշումը։

Իսկ արմատական «Daily News»-ը երկիւղ է յայտնում, որ այդօրինակ բացատրութիւնը միջազգային իրաւանց՝ ապաստանի նկատմամբ, հնարաւորութիւն կը տայ օտարերկրեայ յետադիմական կառավարութեանը, որպէսզի նա օգնութեան կոչելով ստորնակարգ ոստիկանական պաշտօնեաների՝ անպատիժ կերպով փախցնէ իւրաքանչիւր քաղաքական յանցաւորի։

Ֆրանսիական մամուլը առ այժմս ձեռնպահ է մնում կարծիքներ յայտնելուց. վերջինիս մի քանի օրգաններում յոյս է յայտնվում, որ Անգլիան կը ներէ Սավարքարին։

◆ *Միջազգային առողջապահական խորհրդակցութիւնը Պարիզում.* — Ֆրանսիան նախաձեռնող է հանդիսանալու վճռական կերպով կռիւ մղելու ժանտախտի դէմ, որը օրէցօր սպառնական է դառնում։

Առաջիկայ մայիսին Պարիզում կը կայանայ միջազգային առողջապահական խորհրդակցութիւն, վերաքննելու գոյութիւն ունեցող առողջապահական պայմանագիրները, որոնք կապված են այլևայլ պետութիւնների միջև 1903 թ.։

Այդ օրից անցել են 7 տարիներ, և այդ ժամանակաշրջանի ընթացքում բժշկականութիւնն ու առողջապահութիւնը այնչափ առաջ են գնացել, որ կեանքը պահանջում է առողջապահութեանը վերաբերող նոր կանոնների մշակումն։ Հրաւիրվող խորհրդակցութեան գործի դիւրացման համար, հիմնվում է մի կօմիտէտ միջազգային առողջապահութեան անդամներից, նախագահութեամբ պրոֆ. Սանտօլիկվիդօյի։

Կօմիտէտի մշակած եզրակացութիւնները կը հաղորդվեն այն բոլոր պետութիւններին, որոնք հրաւիրված են մասնակցելու միջազգային խորհրդակցութեանը։

Կօմիտէտի զբաղմունքի առարկաները շատ ընդարձակ են։ Նա պարփակում է իր մէջ այն բոլոր հարցերը մանրամասնօրէն, որոնք վերաբերում են ազգերի առողջական դրութեան պահպանման։

◆ *Կ. Պոլիս.*—«Eclair» հաղորդում է օսմանեան պալատի նիստի մասին, որտեղ Դաւիթ-բէյը զեկուցեց բիւջէի նկատմամբ։

Նա շատ խօսեց Ֆրանսիայի վերաբերմամբ, հերքելով այն լուրը, թէ նրա և Թիւրքիայի միջև սառնութիւն է ընկել, փոխառութեան մասին եղած բանակցութիւնների շնորհիւ։

Մինիստրը երևան բերեց մի շարք բացատրութիւններ, որոնք արված էին այս առիթով Պիշօնի կողմից ֆրանսիական պալատում, որը յայտնեց թէ Ֆրանսիան պէտք է որ նպաստէ Թիւրքիայի տնտեսական զարգացմանը և դիւրացնէ նրա ուղին դէպի առաջադիմութիւն։ Դաւիթ-բէյը իր ճառը վերջացրեց այն առաջարկութեամբ, որ պէտք է արտայայտել պաշտօնական շնորհակալութիւն Պիշօնին օսմանեան պարլամենտի անունից։

Նա յիշեցրեց անբերուն և սովորական այն բարեկամական յարաբերութիւնների մասին, որպիսին գոյութիւն է ունեցել Ֆրանսիայի և Թիւրքիայի միջև. նկատեց, որ Թիւրքիան շնորհակալ պիտի մնայ Ֆրանսիային ոչ այնքան այն 2 միլիարդ ֆրանկի համար, որը կը նպաստէ Թիւրքիայի տնտեսական զարգացմանը, այլ աւելի Ֆրանսիայի կրթիչ և քաղաքակրթող ազդեցութեան համար։

◆ *Նիւ-Եօրկ.*—Նիւ-Եօրկի գերագոյն դատարանում քննվում է ամերիկական միլիօնատէր ամուսնացած Ուօլլօրի գործը, որին մեղադրում է ռուս գաղթականուհի Աննա Գրունշպանը այն բանի մէջ, որ Ուօլլօրը մտադրվել էր գայթակղեցնել նրան և այդպիսով խլել նրանից բարի անունը։ Գրունշպանը պահանջում է ի հատուցումն 20,000 դոլլար (մօտ 40,000 ռուբլի)։ Դատավարութեանը ներկայ էր միլիօնատիրոջ ռուսահպատակ կինը, որը չէ կարողանում զսպել իրան և սրտանց ծիծաղում է, երբ դատախազը կարդում է նրա ամուսնու նամակը, ուղղված Աննային։ Այս նամակները ներկայացնում են մի խառնուրդ յեղափոխական և քնքոյշ արտայայտութիւնների բառացանկ։ «Համբուրում եմ քո փոքրիկ ոտիկները,—գրում է սիրահարված միլիօնատէրը.—թող որ նրանք կոխոտեն բռնակալներին։

«Համբուրում եմ քո սիրելի ձեռիկները և ցանկանում եմ, որ դու նրանցով խեղդամահ անես ազատութեան թշնամիներին»։ Այս նամակների ընթերցման ժամանակ դատաստանական ամբողջ դահլիճը անզսպար ծիծաղից դղրդում է և նոյնիսկ դատաստանական պրիստաւը, կարգը վերականգնելիս երեսը ծածկում է թաշկինակով իբրև թէ հազի պատճառով, և անձայն կերպով խնդում է։ Գործը դեռ ևս չէ վերջացած և երևի դեռ ևս երկու շաբաթ կը տևի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.

22 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինչև օրս Թիւրքեստանի երկրաշարժից վնասվածների օգտին կենտրոնական յանձնաժողովը հանգանակել է ընդամենը 2,48,359 ռուբլի։

Դումայի անդամներ Պուրիշկէվիչի և Կրուպէնսկիի միջև ծագած թիւրիմացութիւնների առիթով պատւոյ դատարանը յանցաւոր ճանաչեց Պուրիշկէվիչին, սուտ լուրեր Դումայի անդամների մէջ տարածելու համար։

ԵԱԼՏԱ։ Անսովոր վաղահաս գարուն է։

ՄՈՍԿՎԱ։ Ածելիով կոկորդը կտրեց Կայսերական թատրոնների Մոսկվայի գրասենեակի կառավարչի օգնականի պաշտօնակատար Բիդաեվսկին։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Ռուդնեվը Ֆարմանով վերադարձաւ Սիմֆերոպօլից։

ԴԱՄԱՍԿՈՍ։ Երէկ կախեցին 3 դրուզների։ Դեռ մահապատիժներ լինելու են։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Հայոց Ազգագ. Ընկ. հրատարակութեամբ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ
ՀԱՆԴԷՍԻ
XX գիրքը (1910 թ. № 2).

Բովանդակութիւն.—Հայկական մանրանկարներ, Մեսրովբ եպ. Տէր-Մովսիսեանի։ Նոր-Բայազէտի գաւառ Ե. Լալայեանի։ Սասնայ տան եօթը ճիւղ, Վանի գաւառաբարբառով։ Նոր-Նախիջևանի բանահիւսութիւնից Փորքշեանի։ Ալաշկերտի բանաւոր գրականութիւնից Նժդեհեանի։ Ղափանի բանաւոր գրականութիւնից Արքայիկի։ Վասպուրականի ազգագրութիւնը Եր. Լալայեանի։ Վասպուրականի նշանաւոր վանքերը Ե. Լ. Մատենախօսութիւն Տէր-Աւետիսեանի։

20 պատկեր բնագրում և 11 առանձին թերթի վրա։

Գինն է 1 ր. 50 կ.

Բացված է «Ազգագրական Հանդէսի» 1911 թ-ի 2 գրքի բաժանորդագրութիւնը. բաժանորդագինն է 3 ր., 1910 թ. երկու գրքի հետ 5 ր.։

Դիմել՝ Въ редакцію «Азгагракань Андесъ», Тифлисъ, Веляминовская 14.

(ա.օ.) 157. 6—5

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ"
ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԳԻՒՂԱՑԻ ԲԻՒՏՆԵՐԸ, հետաքրքրական վէպ Լ. Տօլստոյի, ընդարձակ առաջաբանով, գերմ. թարգմ. Ս. Թառայեան	1 ր. 25 կ.
ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ, վէպ Ա. Ցովհաննիսեանի	1 » »
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Պալասանեանի	1 » 50 »
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, Լ. Մանուէլեանի 3 հատոր	1 » 30 »
ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ, Խ. Աբովեանի, պօստի ծախքով	— 75 »
ՀՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, յարմարեցված և կանվայի համար	1 » —
ՂՈՒՐԱՆ, թարգմանեց արաբերէնից հայերէնի Ս. Ամիրխանեան	3 » —
ՆԱՄՈՒՍ, Շիրվանզադէի	1 » —
ՑԱԽԱԳԱՐ »	— 50 »
ՔԱՕՍ, »	1 » 50 »
ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ	— 60 »
ԱՐԱՋԸ, Ահարոնեանի	— 80 »
ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ »	1 »
ԻՏԱԼԻԱՅՈՒՄ, »	1 » 50 »
ՊԱՏԿԵՐՆԵՐ, »	1 » —
ԼՌՈՒԹԻՒՆԸ, »	— 60 »
ՄՈԽԻՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ, »	— 40 »
ԽԱՒԱՐԻ ՄԷՋ, »	— 60 »
ԱՆԴՈՒՆԴԸ, »	— 40 »
ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ,	— 5 »
ԳԱՅԼԵՐԸ ՈՌՆՈՒՄ ԵՆ	— 10 »
ԽԵՂՃԵՐԸ,	— 75 »
ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ, կազմ. Աղայեան, Ահարոնեան, Թումանեան և Փափազեան, 2 հատորից, պատկերներով	4 » —

Դիմել՝ Книжный магазинъ „ГУТТЕНБЕРГЪ" Галустяну.

(Կ.) 183. 2—1

№ 4711
PARFÜMERIE
F MÜLHENS

ՎԱՐԴԻ
ԲԻՒՐԵՂԵԱՅ
ՍԱՊՈՆ
անպայման անհրաժեշտ է կաշուի և երեսի գոյնի ռացիօնալ հոգացողութեան համար։
Գլիցէրինի մեծաքանակ բովանդակումն, տնտեսութիւն՝ փրփուրի առատութեան պատճառով, վարդի քնքոյշ անուշահոտութիւն,—ահա յատկութիւններ, որոնք զանազանում են այդ սապօնը։
ԿՏՈՐԸ 25 ԿՈՊ.
Իսկականը միայն մարկայով 4711
ՖԵՐԴ. ՄԻՒԼԳԷՆՍ
Պարֆիմէրիա 4711 Կէօլնում Ռէյնի վրա։
Հիմն. 1792
ԲԱԺ. ՌԻԳԱՅՈՒՄ
Մատակ.-շատ Բարձ. Պալատ.
Ծախվում է դեղատներում և դեղատն. ու պարֆիւմ. խանութներում։

(M. 436432/436450) 33. 11—6

ВЫШЛА ПЕРВАЯ КНИЖКА ЛИТЕРАТУРНАГО ЕЖЕМѢСЯЧНИКА-АЛЬМАНАХА
„НАШИ ДНИ".
ПРОИЗВЕДЕНІЯ: М. Арцыбашева, С. Сергѣева-Ценскаго, І. Ясинскаго, А. Ремизова, Леон. Андрусона, Н. Олигера, Александра Рославлева, Ив. Рукавишникова, Вл. Ленскаго, П. Потемкина, В. Гордина, Н. Карпова, Г. Яблочкова, Давида Аратова, С. Семенова-Волжскаго.
ПОРТРЕТЫ, ШАРЖИ и ЛИТЕРАТУРНЫЯ НОВОСТИ.
Цѣна въ отдѣльной продажѣ 50 коп. Выписывающіе изъ редакціи журн. «Наши Дни» за пересылку не платятъ. Книгопродавцамъ обычная уступка.
ПРИНИМАЕТСЯ ПОДПИСКА НА 12 АЛЬМАНАХОВЪ И КНИГЪ,
которые выйдутъ въ теченіе 1911 года и составятъ собой самостоятельную литературную библіотеку. Подписная цѣна: 3 р. 50 к. въ годъ (12 книгъ) и 2 р. на полгода (6 книгъ). Иногороднюю подписку адресовать: Петербургъ, Коломенская 7, кв. 29., редакція журнала «НАШИ ДНИ». Подписка принимается также во всѣхъ книжныхъ магазинахъ, конторахъ по пріему подписки и объявленій и пр.
Подробныя объявленія высылаются безплатно.
3—2



ԱՄԵՆՔԻՆ ՅԱՅՏՆԻ Է,
որ Շվէյցարիան ներկայանում է իբրև գլխաւոր աղբիւր ամեն տեսակ ժամացոյցների ֆաբրիկացիայի. հետևաբար՝ իւրաքանչիւր ոք, ով ցանկանում է ձեռք բերել առաջին ձեռքից, ուղղակի Շվէյցարիայից, ժամացոյցներ, թող բերել տայ միայն մեզանից։ Այդ ժամաց. գրպանի են, շատ շքեղ, կապոյտ պողպատից, ֆանտազի ձևի, միանգամայն տափակ, ոչ հաստ արծաթէ բուրլից, ոսկեզօծ կամ արծաթազօծ ցիֆերբլատով, բէմօնտուար, լարումը 40 ժամը մի անգամ, քարերով, անկերային գեղեցիկ մայատնիկով (տես նկ.)։ Առանձին ուշադրութիւն է դարձված ժամաց. ուղիղ ընթացքի վրա, որ ստուգված է մինչև րօպէն և այնքան ամուր է, որ ֆաբրիկան դրա համար երաշխաւորում է 5 տարով։ Ժամաց. հետ միասին ուղարկում ենք ֆանտազ. կախարան «Մօդէրն», յղկված մարմարից, բրօնզեայ 2 սիւներով, գեղեցիկ շինուածք՝ յունական ճաշակով (տես նկ.), որպիսի կախարանի վրա՝ պարապելու ժամանակ՝ կախելով ժամացոյցը, ստացվում է մի գեղեցիկ զարդ գրասեղանի կամ տուալէտային սեղանի համար։ Ժամացոյցի գինը՝ կախարանի հետ միասին՝ միայն 4 ր. 25 կ., 2 հատը 8 ր.։ Ուղարկ. ենք վերադիր վճ., առանց կանխավճ.։ Ճանապարհածախսը՝ մաքսի հետ միասին՝ 40 կ., Սիբիր—75 կ.։ Հասցէն, որը կարելի է կտրել և կպցնել ծրարին կամ բացիկին.

РОБЕРТЪ КОЛЛІО, Шодефонъ 140. (Швейцарія)	Robert Colliot, Cheux-de-Fonds (Suisse) rue du Temple Allemand № 17.

Շվէյցարիա ուղարկվելիք նամակներին պիտի կպցնել—փակին 10 կ., իսկ բացիկին 4 կ. մարկա։ Պահանջները գրել ռուսերէն լեզուով։

(Հ.) (B. 13344) 155. 3—2

ԲԺՇԿՈՒՀԻ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. հ.) 564. 100—85

ԲԺԻՇԿ
Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր (10—11 ժ. առ. (երեխաների)
(5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388.
(Ե. հ. Կ.) 909. 100—89

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(օ. մ.) 1179. 100—66

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Կատարում է կաշուի տակ սրսկումներ, վէրքի փաթաթումն, գեղերի քսումն, դնում է բանկաներ։ Բժշկութիւն ողնամարդի սեռական բուրուբեան, անկարողութեան, սերմնահոսութեան և երազախաբի, հիմնաւոր բժշկութիւն տրիպէրի (սուսունակ), ցոյց է տալով հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին մանրամասն խորհուրդներ և դեղեր՝ գրաւոր կերպով։ (Ուղարկել առնուազն 3 րուբլի)։ Մասսաժ էլեկտրականութիւն, բժշկական մարմնամարզութիւն։ Չքաւորներին ձրի չորեքշաբթի օրերը։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Կարելի է ստանալ իր գրած «Տրիպէրը և նրա բժշկութիւնը» գիրքը, գինը 20 կոպէկ։ Հասցէն՝ Թիֆլիս, Վօրօնցօվի արձանի մօտ, Семеновская ул. № 9.
(Կ. հ.) 160. 50—2

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Ե. ՖՐԱՆԳԵԱՆԻ
Պեսսիմիզմի փիլիսոփան
Շօպէնհաուէրի նկարով, նրա մահվան 50-ամեակի առիթով, 160 էջ, գինն է 50 կոպ.։
Բովանդակութիւն.
1) Գծեր Շօպէնհաուէրի կեանքից (խարակտերիստիկա)։
2) Շօպէնհաուէրի պեսսիմիստական փիլիսոփայութիւնը։
I. Ներածութիւն, կենսահայեցողութիւն։
II. Շօպէնհաուէրի պեսսիմիզմը։
III. Կարեկցութեան կամ տառապանքի մօրալը։
IV. Կամքի ժխտման թէօրիան, նիրվանա և ինքնասպանութիւն։
V. Պեսսիմիզմի պատճառները. քննադատական խօսք։
3) Գրականութիւն։
Լոյս են տեսել և վաճառվում են նոյն հեղինակի՝ 1) «Նիցշէ և նրա փիլիսոփայութիւնը», նկարով, 96 էջ, գինն է 20 կ., 2) «Միտք», գիտական-փիլիսոփայական ժողովածու, 336 էջ, գինն է 1 ր. 50 կոպ.։ Այս երեք գրքերը միասին պատուիրողը (հեղինակի մօտ) կը ստանայ 1 ր. 60 կ.-ով, ճանապարհածախսով՝ 1 ր. 75 կ.։
Հեղինակի հասցէն. Эривань, Армянская Семинарія. Ерванду Франгяну.
(օ. մ.) 170. 2—2

ԲՈՐՍԱ
Ամեն տեսակ յանձնարարութիւններ՝ բորսայում գնելու տոկոսաբեր և դիվիդենտային արժեթղթեր, նոյնպէս և բանկային ամեն տեսակ գործողութիւններ զաւառական կլիէնտների համար կատարում է շուտափոյթ և բարեխիղճ կերպով
ԶԱԽԱՐԻՅ ԺԴԱՆՕՎ և Ընկ.
Բանկային Տուն
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Նէվսկի պր., 45.
Պատասխանները առաջին պօստով։ Բոլոր գործողութիւնների պրօսպէկտը բառ պահանջման ուղարկվում է ՁՐԻ։
(10,24) (П. 20759) 104. 2—2

ԲԺՇԿՈՒՀԻ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ԶԱՒԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր (առաւօտ. ժ. 9—12
(երեկոյեան ժ. 5—7
(Ե. հ. Կ.) 1254. 100—38

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.